



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտանսազրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձեռփոխել կամ օգտագործել առկա նյուրը առեջելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՆ-1681

ԱԿՈՒԼ ԲԱԿՈՒՆԻՑ



# ՍՊԻՏԱԿ ԶԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱ-  
ՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՄՌՈՎԿՎ.Ը, 1929

891.99

р. 22

Широкий збіг.

Чиркунч

25824

Чиркунч

збіг.

ԱՀ-1681

ԱԿԱԲԵԼ ԲԱԿՈՒՆԻՑ


✓

89109  
F-22

0906-14.07.6 1981 թ.

# ՍՊԻՏԱԿ ԶԻՆ

Հ 27062



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՐԻՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
ԽՈՍԿԵԼ. 1929



КНИЖНАЯ ФАБРИКА  
ЦЕНТРАЛЬНОГО  
ИЗДАТЕЛЬСТВА  
НАРОДОВ СССР  
МОСКВА ШЛЮЗОВЫЙ  
ПРОЕЗД ДОМ № 6

Главлит № А 13558.

Зак. № 39.

Тираж 2000.

## ՍՊԻՏԱԿ ԶԻՆ

Շարմաղ բիբին մի սովորույթ ուներ. իրիկնապահին, յերբ ժամնարը ծլնպացնում եր ժամի զանգերը, տան դուռը, յեթե փակ լիներ, անքանքալով պիտի մոռենար, հաստ դուռը բանար և կամ թե թուներից մեկն ու մեկին պիտի ասեր.

— Զանգերը տիին, դուռը բաց արա...

Շարմաղ բիբու ասելով, իրիկնապահին ժամի զանգերի ծլնպոցի հետ աստծու որհնությունը ներս և մանում ու մնում սկացած ոճորքի տակ։ Յեվ այդ սովորույթով ել վերջանում ելին Շարմաղ բիբու կրոնական զգացումները։ Ժամ չեր գնա՞ հազարից մի անգամ մեռելորհնենքին թե տերտերի խաչը համբուրեր, այդ եր։ Վոչ աղոթք զիտեր, վոչ ել ծանոթ եր յեկեղեցական տոների ու ծեսերի հետ։ Բայց և այնպես խոր ակնածանք ուներ, մանավանդ ծլնպացող զանգերի հանգեցալ:

Այդ իրիկուն ել, յերբ Շարմաղ բիբին դուռը յետքաշեց ու գուան մոա մի քիչ կանգնեց, անեցիք, վոր սիսոցի չորս բոլոր նստած ընթրում ելին, հանկարծ դաղար տիին և աչքերը լայն բաց արին։ Նույնիսկ

փոքրիկ Յեփոն մնաց սառած, աչքը գդալից ծլծլացող  
ապուրին:

— Ե — հե — հեյ, ժողովուրդ... թագավորի հրաման  
ա, ձիատերն եգուց ձիով քաղաք, բազար գնա... Զտա-  
նողը... Ե — հե — հեյ... թագավորի հրաման ա,

Յեկ ձայնը թոթուաց, բարակեց, վորովհետև գվիրը  
ուրիշ կտուր բարձրացավ և յերեսն ուրիշ թաղի կողմ  
դարձրեց: Շարմաղ բիբին չիմացավ ել թե զանգերն  
ինչպես լուցին: Դուռը ծածկեց:

— Զնո, բայզուշ, հենց ես սհաթին եր...

Յերբ Շարմաղ բիբին յեկավ, տեղը նստեց, և Յեփոն  
ել, զդալը ծծելով, դատարկեց, Միկին քթի տակ, կար-  
ծես ինքն իրեն, ասաց.

— Եսոր, խոտատեղ գնալիս, Սաքանի տղան ել  
ասեց... Յես ասում եյի սուտ կլինի:

— Ապի, յանի թագավորն եղքան ձի ինչի՞ յա-  
հավաքում, — հորը դարձավ անդրանիկ աղջիկը՝ ութ  
տարեկան Շողերը:

— Յես ի՞մ, — ուսերը թոթվելով ասաց հայրը, —  
Զորք ա, կոփիվ ա, հանաք-մասխարա չի:

— Բնու բնւ...

Զիմացան թե Յեփոն տաք ապուրն եր փչում, թէ  
իր դարմանքն եր արահաճառում: Միկու կինը ոլա-  
տառը կիսատ թողեց, մոտեցավ և սկսեց փոքրին  
կերակրել:

— Մեր Զալկան չափումը կդամ. — հարցրեց նա  
Միկուն: Ամուսինը չպատասխանեց:

Զալկան նրանց միակ ձին եր, կարճլիկ ու գնդլիկ, կարմրագույն, պոչը յերկար: Յերկու տարի յեր, վոր Միկին գնել եր, ավելի ճիշտ՝ փոխել եր եշի հետ, վրան ել տվել մի հորթ, մի կարպետ, յերկու բեռ ել ցորեն:

— Տուն եմ, քուլֆաթի տեր եմ, առանց ձիու հնար չկա, — ասել եր նա՝ ձին առնելիս: Ու տեղն ել բարի վայելեք եր մաղթել, ձիու հետ ել հազար տեղից կապկապած, կարկասած մի սանձ բաշխել Միկուն:

— Հայվանն ել թարսի պես ջանով ա, — ասաց Միկին, փեղից հացի կտորտանքը խնամքով սփռոցի վրա թափ առալով: — Տարվա ես ժամանակ ձին ել եղքան ջանով լինի: Հալբաթ եսպես պիտի լիներ...

Ասաց ու վեր կացավ, փափախի մորթուց ծղնոտները, խոտի փշտանքը մեկ-մեկ դեն զցելով, դուրս յեկավ զյուղամեջ, հարևան ու դրկցից իմանալու նոր լուրեր:

Միկին շեմքի առաջ մի քիչ կանգնեց, նայեց ձիուն, վոր խոտատեղից վերադարձել, ախորժակով խըժուում եր սարի կանաչ խոտի մի խուրձ, յերեմն զլուխը վեր հանում, աջ ու ձախ դարձնում: Միկին մի անգամ ել համոզվեց, վոր ձին նիհար չի, ափսուանքով մոտեցավ.

— Սատկած, քիչ կեր ելի, տրաքվելու չես հո...

Ասաց ու խուրձը դրեց գոմի կտրան:

— Հը, կասես բոյը կարճ լինի... Չափումը չգա, — դարձավ նա մորը՝ վոր հավաքունի մուտքը կալել ու կանգնել եր քիչ հեռու:

— Յես ի՞մ, այ վորդի...

— Ըստւսի ղազախը սրա վրա վոր նստի, վուաները տափով քաշ կղան, — ասաց Միկին ու անցավ բակով դեսի փողոց:

Մութն եր, յերբ գյուղամիջից Միկին տուն դարձավ: Գումում կապած ձին լսեց տիրոջ վուանաձայնը, բարակ վրնջաց: Միկին խղճահարվեց, աչքն ընկապ գոմի կտրան դրած խուրձին:

Հենց ճրագը ձեռքին, խոտը կռան տակին Միկին գոմի դուռը բաց արեց թե չե, Զալկան վրնջալով մի քանի քայլ արեց, փորձեց կարել կապը, բայց չկարողացավ:

Զալկան տկլոր եր, և լույսի տակ այնքան վողորի ու փայլուն յերևաց նրա կարմիր մորթը, ասես յուղած լիներ: Միկին խոտը ախոռի մեջ գցեց, և յերբ ձին մոռւթը կոխեց մեջը, ձեռքով շոյեց Զալկայի փափուկ մեջքը:

Ընդարձակ կ հին գոմի մի անկյունում պառավ կոմի եր նստել, իսկ յերկու այծերը, վորոնք կանգնել ելին մսուրի վրա, Միկին տեսնելուց թուան ցած, մկկալով մոտ վազեցին: Այդ գիշեր Միկին չմոտեցավ վոչ կովին և վոչ ել այծերին, մի քիչ ել կանգնեց, Զալկայի վոտերի տակ թափած խոտը հավաքեց ախոռի մեջ և դուռը դըեց:

Յերեխաները քնել ելին: Շարմաղ բիբին, աչքերը կկոցելով, իզուր եր փորձում մեծ ասեղը թելել Միկու գուլաները կարկատելու: Յերբ դուռը ճռռաց, մայրը թողեց թել ու ասեղը և հարցրեց:

- Հաստատ մ...  
— Բա հո սուտ չի...  
— Ի՞նչ են տառմ:  
— Ասում են բոյը հաշիվ չի, թե մեջը սափ լինի, հիմանդ չլինի, —և դառնալով կնոջը, —ծեղին ենք գնալու, հաց ես շինելու, շինիր, կարող ա մի որ ուշանանք:  
Յեվ յերբ կինը հացի տաշտին մոտեցավ, մայրը նստած տեղից ձայն տվավ.  
— Մի քանի հաց ել ավել շինի:  
Միկին ինչ վոր բան եր փնտում տան անկյունում, ու փնտուածը չզտնելով, հարցրեց մորը.  
— Նանի, Զալկայի են մեծ տոպրակը ուր ա, հետո մի քիչ զարման վեր ունեմ:  
Շարմաղ րիբին վեր կացավ մեծ տոպրակի միջի բուրդը թափելու:  
Բնելուց առաջ Միկին մի անգամ ել գնաց զոմ: Պառակ կովը, այդ անսովոր այցից զարմացած, մինչեւ վեր կկենար ու վորոճալով կմոտենար գոմի դռան, Միկին ձիու փալանն ու պարանները սարքեց, զրեց ախոռի մոտ և զուռը փակեց:  
Յերբ ճամփի պաշարը պարկի մեջ տեղավորելուց հետո կինը ճրագը հանգցրեց ու մութի մեջ շուլալվեց վերմակի տակ, Միկին մյուս կողքին դարձալ: Քիչ հետո կինը շշուկով հարցրեց.  
— Բա ել ճար չկամ...  
— Ի՞նչ ճար: Թե ջանին յարա լիներ... Հակառակի պես անիրավի մեջքը կասես խինայած լինի:

Կինը մի անգամ հանգ արեց խնդրելու, վոր Միկին  
քաղաքից գոտկալի կտոր բերի, բայց չասեց: Տեղը չեր:

Յեկ լոեցին: Այդ գիշեր շատ ուշ քննցին: Յերե-  
քով ել լուռ եյին, միայն յերբեմն Շարմաղ բիբին  
կողքից կողք եր դառնում, տնքում, ասես պառավիլ  
վոսկորները փշերի վրա եյին: Փոքրիկ Յեփոն ել,  
քնի մեջ, շրթունքներն իրար տալով, ծծում եր տաք  
ապուրը:

Յեղը գեռ չեր բացվել, յերբ Միկին ճրազը ձեռին  
մտավ գոմը, Զալկային փալանեց ու դուրս քաշեց:  
Հարևան բակերումն ել ճրազներ եյին յերեռում, ինչ  
վոր ձայներ եյին գալիս: Միկին ճանաչեց Սաքու  
տղայի ձայնը: Սաքու տղան բարկացել եր հարսի  
վրա, թե ինչու չվանը ժամանակին չի գտել:

Դուանը կանգնել եյին՝ Շարմաղ բիբին, կինը և նրա  
փեշից բռնած, առավոտյան հովից սպրդնած՝ քնա-  
թաթախ Շողերը, վոր չեր լսել մոր խոսքին, լայ  
լինելով հագել եր շորերը և դուրս յեկել:

Զալկան գոմից յերբ գուրս յեկավ, վրնջաց, ականջ-  
ները խշեց: Շարմաղ բիբին ձեռքով կրծքին խվեց  
և հազիվ լսելի ասաց.

— Զան, — ու սրբեց արցունքու աչքերը:

Շողերը մոտ վազեց, գետնին թափած յերեկվա  
խոսի փշրանքներից մի բուռ մոտեցրեց ձիուն: Զալ-  
կայի տաք մոռւթն այնքան դուր յեկավ Շողերին:

Միկին ճամփի պաշարն եր պնդացնում փալանի  
վրա և, պարանը քաշելով, անեցիներին պատվիրում,

վոր այծերը հեռու չքշեն, վոր արև լինելուց՝ խոտի  
կիսուկները շրջեն և յեթե ջրի հերթն իրենց տան,  
լոբու մարգերն անպատճառ ջրեն: Հենց այդ խոսքին  
եր, յերբ ներքենից լսեց Սաքու տղայի ձայնը՝

— Միկի, բա չպրծմը...

— Յեկա, յեկա...

Յեկ Զալկային քաշեց: Տնեցիք դանդաղաքայլ հե-  
ահեցին, ասես անից դազաղ եյին հանում: Շարմաղ  
բիբին մի զլուխ լալիս եր. լաց եր լինում և Շողերը  
հենց այնպես, կորովհետեւ լալիս եր մայրը: Փողո-  
ցին չհասած, մայրը լսեց Յեփոյի ձայնը՝

— Ապի, ապի...

Դուան շեմքին կանգնել եր տկլոր Յեփոն, պոռշ եր  
արել ու լաց եր լինում:

Միկին չլսեց: Քիչ հետո իջավ ձորը, սիացավ Սա-  
քու տղայի և մի յերկու ուրիշ ձիավորի հետ:

Մայրը վերադարձավ, զրկեց վորդուն ու տուն  
մտավ: Շարմաղ բիբին ու Շողերը կանգնեցին այն-  
քան, մինչև ձիավորները դարիվերը բարձրացան և  
անցան սարի յետեւ:

Արել նոր-նոր եր շողերով վողողում իր դիմացի սարի  
կատարը, յերբ վերջին ձիավորը յերեաց դարի վերի  
զլիին ու անհետացավ:

Ձիավորները սկզբում լուռ եյին: Ամեն մեկը իր  
մտքի հետ եր, նայում եր իր ձիուն, համեմատում  
հարեւանի ձիու հետ և մտքում ծանր ու թեթե անում.

— Կատանե՞ն թե չե...

Գնում եյին մեկ-մեկ, խումբ-խումբ: Մեկը զրպանից պանիրնաց եր հանում, ուստում, մյուսը չի-ըռուխը չիբուխի յետևից եր լցնում, յերբորդն ել՝ վոսները կախ արած, աշքը ձիու ականջներին, որորվում եր ձիու հետ:

Բայց յերբ արել մի քիչ բարձրացավ, կարծես լուռ ու մունջ ձիավորների սիրան ել բացվեց: Ամենից առաջ խոսեց բրուտ Ավագի տղան՝ աշքը շիլ իվանը:

— Այ մարդ, յես աստծուն ինչ ասեմ... Ի՞մ աշքս քոռ արեց: Զիս վոր քոռ լիներ, յես ել հո ետապով չեցի գա...

Մի քանիսը ծիծաղեցին: Սաքու տղան մտքում բարկացավ նրա վլա՝

— Անդարդ շան վորդի...

— Հրեն, հրեն... Հիբանի ձիուն տեսեք... կասես դաղախի ձի լինի: Հիբան, պրիստավը վոր քեզ ետ ձիով տեսնի, հավատանց քեզ ել հետը կավա-լեր տանի...

— Ի՞նչ պակաս կավալեր ա վոր... — ձայն տվավ մեկը: — Են որը Քարուտի առվով մի թռավ վոր, մնա-ցինք արմացած:

— Մի տեսեք ե... Տերտերն իրա ձին ժամհարին ա պել: Այ ինչ եմ ասել ախպերության, — խոսքը վո-խեց բրուտի տղան:

— Այ, քիչ յավա-յավա խոսիր, եյ... — կանչեց Շու-ղունց Աքելը, վոր դյուղում ավելի անունով հայտնի

յեր, վորապես «Աղվես խեղդող», ջահել ժամանակ սուրում ձեռքով մի աղվես բոնելու համար. — Տերտերը հիվանդ տեղով կարող ան ձին նստի:

— Դե ասի մնացել ա, վոր աղոթք անի ելի, — սասց մի ուրիշը:

Ընդհանուր խոսակցությունից բացի, ձիավորների մեջ մասնակի զրույց անողներ ել կային: Վոմանք ճանապարհն աննկատ անցնելու համար հարեանին մի պատմություն եյին անում, վոմանք ել խոսում եյին պատերազմի դաշտից յեկող լուրերի մասին:

— Մեր Անդրին անցկացած շաբաթը մի նամակ եր ուղարկել Վարշավու կողմերից, — պատմում եր Գիլանց Մութին, — լավ չի գրում. ասում ե՞ս ա մի ամիս ա մի ծմակի մեջ ենք, թոփերը տրաքում են, մինչեւ անգամ չոլ գուրս գնալն ել ա յերկյուղալի...

— Իմ հորեղբոր Միմոնն ել ա գրել. լազարեթից ա գրում, համա տեղը հայտնի չի: Մի տեսակ անուն ա տալիս... Են որը տերտերը ինչքան ման յեկավ զրքերում, չգտավ: Ասում ա եղանք քաղաք Ռուսեթու հողումը չկա:

— Նրա ի՞նչն ա վոր...

— Վոտիցն ա կպել: Գրում ա վոր ծանր չի, մի ամիս ոտպուսկ են տալու:

— Աքել ամի, դու յերկիր տեսած մարդ յես, ես կորիվ ի՞նչ տեղ կկտրի, — դարձավ նրան բըռուտի տղան: Շատերը ծիծաղեցին, ինքը Աքելը մըթմըթաց.

— Անհամ անհամի տղա...

Նրա տեսած յերկիրը զյուղի ստրերն ելին և շըջանի  
կենարոնը, ուր նստում եր պըլիստավը:

Քիչ հետո խոսք ընկալ ձիերի պետական գնի  
մասին:

— Թեկուղ անունը փող, ի՞նչ կառնալի գրանուլ...

— Յերկու բեռ գարի...

— Եղ ել չես առնի:

— Դե գոնյա զինը տային...

— Տային ել, վորտեղից ես ձի առնում: Մեր  
զյուղից վոր եսքան ձի յեն պահանջել, բա դու տես  
սաղ մհալից քանին են բերելու...

— Ա՛ տղա, ես հո մի կարգին պոլկ ենք... — ասաց  
ըրուտի տղան և բարձր կանչեց՝

— Ալուշայ... Ափիցեր Աքել Շուղունցով...

— Ա՛, հերիք ա, քիչ տնաղ տուր Աքել ամուդ:

— Աքել ամիս նեղանալ չի... դե մի շարքով գնա-  
ցեք, տեսնեմ ով ա յետ ընկել, — ասաց շիլ իվանին  
ու ձին ճանապարհից հանեց:

— Հաշիվը թամամ ա: Աբրհամի ձին չկա, ենա  
բաղարում, իսախանենց ձին՝ վոտը գելը ցրիվ ա տը-  
վել, մեկ ել կոստանդ խաղեյնի սիւլտակ ձին...

— Վախիլ մի. Կոստանդը հիմա հլա քնած ա, ձին  
ել վոսկի գարի յա ուտում: Վեր ա կենալու, յեղ ու  
մեղը ուտի, ձին թամքի և կաթնաղբյուրում մեզ  
հասնի: Նա հո քու թայը չի. — ասաց Գիլանց  
Մուքին:

— Մի հաշիվ չի... ես դլխից հենց նրա ձին են  
տանելու, — ասաց Միկին:

— Իշտահ պահի, — պատասխանեց Իվանը, — քու  
Զալկադ պերվի նումերը հանելու ա, Շարմաղ հորքիրն  
ինչքան ուզում ա թող լաց լինի:

— Ուրեմն Կոստանդի սիպտակ ձին ու Զալկան մի հա-  
վասարի յեն... Բա նա Ռահիմ բեկին մի բեռը վոսկի յա  
տվել, սիպտակ ձին առել: Յես ինչ եմ տվել՝ մի կաղ  
եշ, մի կարկատած կարպետ:

— Ես ա սև ու սիպտակը կջոկվի, — ասաց բըռուտի  
տղան և խոսակցությանը վերջ տալու համար սկսեց  
պատմել, թե ինչպես հարեան գյուղից մի զինվոր  
ֆրոնտից նամակ ե ուղարկել և նամակի մեջ ել  
գրել, վոր ինքն իրենց զորամասում տեսել ե և ճա-  
նաչել իր հորեղբոր ձիուն:

— Տես ե... Վորտեղից վորտեղ...

— Կպատահի, ինչ կա վոր...

— Տեսնես ձին ել ճանաչել ե...

— Զե մի՛ յեկել, վզովի ա ընկել...

Քիչ հետո ձիավորները հասան Կաթնաղբյուր և Գի-  
լանց Մուքու առաջարկավ իջան ջուր խմելու, մի քիչ  
հաց ուտելու և ձիերին ել արածացնելու աղբյուրից  
ներքե ընկած արոտներում:

Արեը բավական բարձրացել եր: Միկին քարի  
ստվերում թիկն եր տվել, աչքը գցել արածող  
ձիերին Գյուղի ձիերի հետ Զալկան ել եր արա-  
ծում...

Միկին աչքի տակով համեմատում եր իր ձիու  
բարձրությունը մյուս ձիերի հետ:

— Թե Գիլանց Մուքու ձին հավասարվի Զալկայի  
հետ... Թե չե՞նրանից կարճը չկա...

— Միկի, հրեն, — ասաց Բըռուտի տղան:

Միկին գլուխը յետ դարձրեց: Ձին խաղացնելով,  
հեռվում յերևաց Կոստանդը: Յերևում եր, վոր  
ձին արագ եր վազում և վուքերի տակից փոշի հա-  
նում: Թամքի վրա Կոստանդը վեր ու վար եր անում,  
մեկ առաջ կռանում, մեկ ել յետ ձգվում և սանձը  
քաշում: Կոստանդի սպիտակ ձին, առաջի վոտերը  
խաղացնելով, թռչում եր քարերի վրայով, գլուխն աջ  
ու ձախ դարձնում, փորձում սանձն ազատել հեծվորի  
ձեռքից: Արևը դիմացիցն եր, և արևի տակ թամքի  
արծաթ ասպանդակներն ու կապերը փայլվում եյին:

Ձիավորների խոսակցությունը դադարել եր: Բոլորն  
ել նայում եյին նրա կողմը: Շուղունց Աքելի բերա-  
նում հացի պատառը սառել, մնացել եր:

— Այ, ձի... Հազար մանեթ զին ունի...

— Տերն ել պակաս փող չունի...

— Ետ ձին ինձ տան՝ կոփվ չգնացողը մարդու  
տղա չի, — ասաց ըրուտի տղան:

— Տեսնես ինչ մեծավոր ա նստելու: Ամենաքաշը  
գեներալ կլինի:

— Վրան նստողը պակաս գեներալ չի...

Կոստանդը, յերբ ձիավորներին հասավ, սանձը ձգեց,  
մի կերպ ձիուն պահեց: Կապույտ քրափինքը փրփուր

Եր դիղել նրա մարմար մորթու վրա։ Զին փնչացնում  
եր, վոսքերը դոփում։

— Դուքս գալդ մի սհաթ կլի, Կոստանդ, — հար-  
ցրեց Շուղունց Աքելը։

— Մհաթի չեմ նայել... մինչև դուք ձիերը նըս-  
տեք, յես բազար կհասնեմ։ Զեմ ել կարողանում  
պահեմ, ձեռքերս կոտրվեց։

Բրուտի տղան կամացուկ ասաց՝

— Տուք ինձ, յես պահեմ...

Կոստանդն ուզեց ինչ վոր բան ասի. սանձը մի  
քիչ թուլացրեց, սպիտակ ձին զզաց այդ և տիրոջ  
խոսքը կիսառ թողեց։ Զիավորները սպիտակ ձիու  
թողնելը տեսան... Մի ակնթարթից հետո ձին պահ-  
վեց սարի յետեւ։

— Այ հրեղեն ձի սրան են տաել...

Քիչ հետո զյուղացիք քաշեցին ձիերն ու ճանա-  
ոլարն ընկան։

Շըջանի կենտրոնը մի բազմամարդ ավան եր, վորի  
մեջ տեղն ընդարձակ հրապարակն եր, չորս բոլորը  
փոքրիկ կրպակներ։ Ցերք ձիավորները հասան, ասեղ  
զցելու տեղ չկար։ Փողոցներում, արտերի միջնակնե-  
րում, տների բակերում և հրապարակներում այդ որը  
ձիուց բացի ուրիշ անասուն չկար։

Հաղար գույնի ձիեր՝ վորձ ու եգ, ծանրած, մեծ  
ու փոքր քուռակներով, թամքած ու փալանած, կա-  
պոտել եյին՝ վորը մի քարից, վորը մի ծառից կամ

զեանին խրած բիհրից, կամ թե իրարից։ Մեկի  
առաջ խոտ եր, մեկելինը՝ դարման, յերրորդինն ել՝  
վոչ դարման և վոչ խոտ։ Քաղցած ձիերը պոկտում  
եյին չորացած, հազար սմբակներով տրորված խոտը։  
Չիերն իրար հետ կովում եյին. ամեն անկյունից  
վրնջոցի ձայն եր լսվում. ձիերի բազմության մեջ  
քուռակն իր մորն եր կորցնում, արծաթահնչյուն  
վրնջոցով վազում, մոռութը մոտեցնում ուրիշ մատակի  
պտուկներին։ Վորձաձիերը պոկտում եյին կապերը  
և ամենի վրնջոցով հալածում մատակներին, աքացի  
տալիս, իրար կծոտում, արնոտում։

Ցեվ այդ ժխորին խառնվում եր տերերի կանչն ու  
աղմուկը, հարայ-հրոցն ու բղավոցը։ Հայ, թուրք  
խառնվել եյին իրար։ Զինվորական հրամանը բոլոր  
գյուղերումն ել կրկնվել եր նույնությամբ, և հազա-  
րավոր բակերից, գոմերից կածաններով ու արահետ-  
ներով ձիերը քշել, հավաքել եյին շրջանի կենտրոնը։

Հրապարակի մի անկյունում, տախտակներից շինած  
փոքրիկ բարձրության վրա մի յերկար սեղան եր  
դրված, վորի շուրջբոլոր նստել եյին պաշտոնյա-  
ները։ Դեպի այդ խմբակն եր ուղղած բոլորի աչքերը,  
վորովհետեւ այդտեղ եյին վորոշում ձիու և ձիավորի  
բախտը։

Գյուղի տանուտերը կարդում եր ձիավորի անունը,  
բազմության միջից մեկը, ձիու սանձը բռնած, առաջ  
եր դալիս, ինչպես կրկեսում՝ լմբիշը։ Զիուն մոտե-  
նում եյին մի քան հողի, տնտղում, ատամներին նա-

յուր և ապա թղթի վրա ինչ վոր նշաններ անում:  
Մի վայրկյան խորհրդակցելուց հետո՝ պրիստավը ձեռ-  
քով նշան եր անում:

Ահա այդ նշանն եր, վոր հայտնի յեր դարձնում ամեն  
ինչ: Յեթե նշանը բազմության կողմն եր, ուրեմն ձին  
անպետք ե, աերը վախվիսելով, ուրախությունից դո-  
դացող վոտքերով քաշում եր ձին, հեռանում: Իսկ  
յեթե նշանը տախտակների մ տ կանգնած ոռւս զին-  
վորներին եր ուղղած, ապա նրանք իսկույն մոտե-  
նում եյին, նոր սանձ զցում ձիուն, հինը շպրտում  
տիրոջ կողմը, մի քիչ հեռացնում և իսկույն պոչը  
միահավասար կտրում, բաշը կարճացնում և բաշի  
մազերից կախում տախտակի մի փոքրիկ կտոր:

Զիավորն ընդմիշտ պիտի հեռանար ձիուց, վորին  
տանում, կապում եյին ընդունած ձիերի շարքում, մի  
յերկար ու հաստ պարանից: Տիրոջը մնում եր գլխի-  
կոր վերապառնալ նույն հրապարակով, վորով մի քիչ  
առաջ եր անցել ձիու հետ, ձեռքի մեջ բռնած  
պրիստավի տված թղթի կտորը, վորի վրա նշանակ-  
ված եր ձիու զինն ու տիրոջ անունը:

Զիավորները, յերբ տեղ հասան, հրապարակից մի  
քիչ հեռու իջան: Գիլանց Մուքին և Շուղունց Աքելն  
առաջ ընկան բազմության մեջ գտնելու իրենց գզի-  
րին ու տանուտերին:

Նրանք հարեան թուրքերից, վորոնք առավոտ կա-  
նուխ եյին յեկել, իսկույն հարցըրին.

— Հը, շմա են տանում...

— Ել մի ասեք, դուքն ա...»

Միկին աեսավ իր վաղուցված ծանոթ թուրքին, առանձին հարցրեց.

— Չիտ սիափի վոտը կոտրած լինի կամ մի վերք ունենա, վոր ազատեն, թե չե՞ բոյը հաշիվ չի...

Միկու վոտները թուլացան: Զալկան գնաց, տարան:

Քիչ հետո Գիլանց Մուքին և Շուղունց Աքելը, բաղմությունը ճեղքելով, իրար ճեղքից բռնած, յեկան:

— Հիմա Քարաղլուխն են կանչում, հետո յել պիլքիրեցիք են դնալու, նրանցից հետո՝ մենք...

Միկին մի վայրկյան մտածեց, տուղթակը ձիու գլուխց հանեց ու ձին քշեց:

— Եղ մւր, Միկի, — ձայն ավագ Սաքու տղան:

— Տանեմ ջուր տամ... Կաթնաղբյուրում չխմեց: Միկին ձին նստեց, հեռացավ:

Մի քիչ հետո յերեաց և կոստանդը:

— Ինչի՞ յես վոտով, կոստանդ — հարցրեց Շուղունց Աքելը, մի քիչ յետ քաշվելով:

— Չիս տարել եմ քարվանսարան... — տուց ու հեռվից, ծանոթ մեկին ձայն ավագ, դնաց նրա կողմը:

— Եստեղ մի ոյին կտ, — տուց բրուտի տղան:

Միկին արդեն հեռացել եր հրապարակից: Ճանապարհն այնքան ել դժվար չեր, թեկուզ ամեն աեղ ել ձիեր եյին կապած: Ինչքան հեռանում եր, այնքան ավելի յեր սահման ծայրով Զալկային մտրակում: Բեղարած ձին մի քիչ քայլերն արակացնում եր, իսկ

յերբ Միկին դադարում եր մարտկերուց, դարձյալ  
քայլում եր բեռան առակ մեծացած, զյուղական ձիու  
դանգաղ քայլերով:

Ավանի վերջին առան ել յետ մնաց: Միկին նեղ  
ճանապարհով, կարսամիկիլի թաղերի արանքով ծռեց զեսի  
աջ, առ ձորակի միջով հոսում եր բարակ զետակը:  
Զարկան զզաց ջրի մոտ լինելը, քայլերը արագացրեց:

Զօրն իջնելուց առաջ Միկին մի անգամ ել յետ  
նոյեց, աեսամի, վոր վոչ վոք իրեն չի նկատել:  
Աւ ճենց Զարկան զլուխը կոտցրեց ջրի վրա թե չե, Մի-  
կին իջավ, առնձը շատ մոտ կապեց Զարկայի: առա-  
ջին վառքից, պարանով ել մյուս վառքերը կապեց  
և ոկանց արձակել փալանի կապերը:

Զարկան ջուր խմելուց հետո փորձեց զլուխը վեր  
հանել, չկարողացավ: Յեվ մառթը լուռ ու մունջ  
նորից կախեց զետի սասը ջրին:

Միկին արտգ շարժումով փալանը զեն զցեց, կռա-  
ցավ ու վերցրեց մի չեչաքար: Յերբ առաջին անգամ  
Միկին չեչաքարը Զարկայի մեջքին քսեց, ձին հովու-  
թյուն զզաց, խաղացին նյարդերը, կացին զողողաց:

Հանկարծ մեջքին ծակծկոց զզաց: Զարկան փորձեց  
հեռանալ, չկարողացավ, վառքերն ասես պինդ մեխ-  
փած լինելին: Յամը զնալով շատանում եր, միար  
կառը-կառը պոկռառում ելին:

Միկին չեչաքարը տանում բերում եր ձիու մաշկի  
վրայով: Մի քանի վայրկայանում մեջքը մաշկահան յե-  
ղավ, քարն արնառովեց:

Զին տնքում եր, պոչն ուժգին խփում, բայց չեր ոգնում։ Միկին քարը հա քսում եր, տնքում։ Արյան կաթիլները նոր բացված վերքից դուրս ելին ցայտում, իրար միանում և բարակ առվով կախվում, կաթկթում ջրի մեջ։

Չալկան ել չղիմացավ, պառկեց կողքի վրա, բայց Միկին չեր հեռանում։ Ու պառկած տեղն ել քարը քսում եր, քթի տակ մրթմրթում։ Վերջապես դադարեց, քարը շալրտեց ջրի մեջ։

Միկին մի պահ վախեցավ, արյունը գնալով շատանում եր։

— Չլինի տամար տրաքեց...

Չալկայի աչքերի առաջը մթնեց։ Պառկել եր և ցավից փնչացնում եր։ Միկին բռով լի ջուր եր վերցնում, վերքը լվանում։ Քիչ հետո Միկին Չալկայի կապերն արձակեց, ձին վոտի կանգնեց։

Նրա մեջքի աջ կողմին մի ափսեյի չափ վերք եր բացվել, յերեսում եր Չալկայի կարմիր միսը, տեղ-տեղ փոս ընկած, ճաքճաքած։ Արյունը դեռ գալիս եր, բայց մի քանի տեղ արդեն լերդակալել եր։

Միկին արյան հետքերը լվաց, շտապ փալանեց Չալկային ու ձորով բարձրացավ։ Չալկան հազիվ եր կարողանում քայլերը փոխել։ Միկին ինչքան ել մտրակում եր, վոտքով փորին խփում, կանչում, Չալկան քայլերը չեր արագացնում։ Ականջները կախ, մերթ տնքալով, գնում եր փողոցով, դեպի հրապարակ։

Միկին յուրայիններին թողած տեղը չգտավ։ Հարեւան թուրքերն ասացին, վոր հենց նոր նրանց կանչել են Բազմությունը հրելով, յետեից Զալկային քարշալով, Միկին հասավ հրապարակ, վորի մի անկյունում խոնվել ելին՝ շիլ իվանը, Գիլանց Մուքին, Սաքուղան և մյուսները։ Պիսերը կարդում եր անունները.

— Այ մարդ, ուր կորար, քիչ մնաց քեզ շարաֆ անելին։ Ասեցինք հրես կզա։

Ամենից առաջ Շուղունց Աքելի անունը կարդացին։ Դողդողարով առաջ անցավ և մի անգամ միայն յետ նայեց։ Այնքան դունատվել եր…

Յեկան, մոտեցանու Ու մեկ ել այն տեսան, վոր զինվորները վրա տվին, փալանն արձակեցին և շըպրտեցին Աքելի կողմը։ Վոչ մի խոսք չասաց Աքելը, յերբ քիչ հետո ձիու փալանը շալակին վերադարձավ։ Յեվ յերբ բրուտի աղա շիլ իվանը սրախոսեց։

— Ափիցեր Աքել Շուղունցով, — վոչ վոք չծիծաղեց, իվանի ժպիան ել ծումովեց, դարձավ կսկիծ։

Հետո Ռոստամենց ճակատը սպիտակ ձին տարան։ Գնաց և տերտերի ձին։ Ժամհարն յեկավ, գլուխը կախ։

— Հիմա յես տերհորն ի՞նչ պատասխան եմ տալու։

Չորրորդ հերթը Կոստանդինն եր։ Գյուղացիք զարմացան, յերբ նրա անունը կարդացին, վորովհետեւ Կոստանդը նրանց մեջ չկար։ Շիլ իվանը նկատեց, վոր սեղանի շուրջը նատողների մեջ ինչ վոր փսփսոց ընկալ։ Ու հանկարծ հրապարակի մյուս կողմից յերեւլաց Կոստանդը լղար, մեջքը վոս ընկած, մոխրա-

զույն մի ձի յետիից քաշ տալով։ Զնայեցին ել, ձին  
յետ տվին, Կոսաւանդը դուրս յեկավ հրապարակից։

Գյուղացիք մնացել եյին սառած, առղած։ Շուղունց  
Աքելն ուղեց խոսի, բայց լեզուն չորացավ, կառ  
ընկավ։ Բրուտի աղան մոտեցավ Միկուն, թե՝

— Տեսար, յես վոր ասում եյի...

Բայց Միկին չլսեց։ Նրա ականջովն ընկավ իր աղ-  
գանունը, և Զալկան յետից քաշ տալով, մտավ հրա-  
պարակ։

Յերբ յեկան, փալանը վերցնել տվին վոր նայեն,  
մի ակնոցավոր ոռւս, քիթը վեր քաշելով, կուցավ, վեր-  
քին նայեց։

— Զտարան, — անցավ Միկու մտքով։ Բայց հան-  
կարծ ոռւսը յետ դառավ, Միկու վրա մատը թափ  
տվավ։ Միկին դողաց, դունատվեց ու թուլացած  
նատեց փալանի վրա։

Զալկային տարան։ Միկին տեսավ, ինչպես ձիու  
յերկար պոչը կտրեցին։ Ու դրանով աչքին այնպես  
յերեաց, ասես իր ձին մեծացավ, դարձավ դազախի ձի։

Մի մարդ գոռաց վրան։ Միկին սթափվեց, վոտքի  
կանգնեց և փալանն առավ, դուրս յեկավ...

Արեւ թեքվել եք արդեն, յերբ գյուղացիք ճանա-  
պարհ ընկան։ Աղատվել եյին միայն ութ ձի, վորոնց  
վրա և բարձել եյին մնացած ձիերի փալանները։  
Գյուղացիներից շատերն իրենք եյին շալակել ձիերի  
տոպրակներն ու սանձերը։

Աղասիված ձիերը, վորոնցից յերեքը մորուց ծուռ  
վոս եյին; մեկի մեջքն եր ընկած, յերկուսն ել քոս  
եյին, Սարվանենց ձին ել աղասավ եր, իսկ Հարիդանց  
ողառավի ձիու յերկու կողքաճաղը չկար, — աղասաված  
ձիերը բեռան տակ հաւզիվ եյին քայլում:

Լուռ և անխօս քայլում եյին գյուղացիք: Նրանցից  
մեկն ու մեկը յերբեմն կանգնեցնում եր ձին, բեռն  
ուղղում, կամ թե յետ եր ընկնում, արեխի թելը  
կապում:

Միկին գլուխը կախ քայլում եր մյուսների հետ:  
Բրուտի աղան ել եր սուս, վորովհեակ վոչ վոք սիրա  
չուներ լսելու նրան:

Միկին միտք եր անում՝

— Հենց իմ փիսությունս մնաց...

Շալակի տուղթակից ու սանձից Զալկայի քրանա-  
հուսն եր գալիս:

— Հիմա հազար ձիու մեջ անտեր խրխնջում ա...  
Յարաբ, տեսնես արյունը կարեց...

Զեռքին պինդ բռնել եր ստացած թուղթը:

Արեի մայր մանող շողերը հրդեհել եյին ամպերը,  
վառել հազար գույնով: Կաթնաղբյուրի մոս նստոտել  
եյին բեղարած գյուղացիք: Վոմանք հացի փշրանքներն  
եյին ուստում, վոմանք ել լուռ թիկնել եյին տուղ-  
թակների վրա: Մութն ընկնելու մոտ եր. ճանապարհ  
դեռ շատ կար:

Հանկարծ Կաթնաղբյուրի մոտ սմբակների ողողպատ  
նալերը զբնպացին:

Կոստանդ աղեն եր, սպիտակ ձիու վրա...

Միայն Շուղունց Աքելն եր, վոր կեսբերան պատասխանեց նրա բարեին: Մյուսները բերան ել բաց չարին: Բըուտի տղան, աչքը դիմացի սարին դցած, մտքերի հետ կռիվ եր տալիս:

— Տեսմը, Միկի, ոև ու սպիտակը...

Միկին չպատասխանեց: Սպիտակ ձին խաղալով եր սլանում, ասես սմբակները գետնին չեյին դիպչում: Ու յեթե մի քիչ ել վերև թռներ, պիտի կորչեր նարըն-ջագույն ամպերի մեջ:

Կես զիշեր եր, յերը տուն հասան: Դուան մոտ կանգնել եր Շարմաղ բիբին, ճրագը ձեռքին: Միկին ներս մտավ, տոպլրակն ու սանձը գցեց մի անկյունու Անկողնում ծլոնգ յելավ Շողերը:

— Ապի, բա Զալկան...

Շարմաղ բիբին լալիս եր: Յեվ մինչե մահ ել վոչ մի անգամ նա իրիկնապահին բաց չեր անում զուռը, վոր զանգերի ծլունդի հետ աստծու որհնությունը ներս մտնի...

## ԶՄՐԱՆ ՄԻ ԳԻՇԵՐ

Հունվար ամիսն եր։ Չորս որ գիշեր-ցերեկ ձյուն  
եր յեկել, ծածկել սար ու ձոր։ Պատերի տակ քամին  
ձյունը կիտել, դիզել եր մինչև կտուր։ Փողոցներում  
ձյունի վրայով բարակ արահետներ կային, տունից տուն  
ձգվող, վորից ամենից տրորվածը՝ դեպի գյուղամիջի  
աղբյուրն եր տանում։ Յեզ ու կով ձմրան այդ սաս-  
տիկ սառնամանիքին տաք գոմերից դուրս եյին անում,  
ջրելու տանում։ Ցրտից անասուններն ել չեյին ջուր  
խմում։ Կուանում եյին նավի վրա և խկույն հե-  
ռանում։ Մինչև գոմերը հասնելը, քթածակերի տաք  
դոլորշին սառչում, մազերից կախվում եր, վորպես  
ասեղներ։

Ոջախները միշտ վառ եյին։ Յեզ ցուրտ ողին յեր-  
դիկներից բարձրացող ծուխն ավելի կապույտ եր յերե-  
վում, թանձի քողի պես բարակ նստում եր կտուրի  
վրա, մինչև բարակ քամին փչեր, ծվեն-ծվեն աներ։  
Միայն յերդիկի մոտ եր, վոր ծուխից ձյունը հալչում  
եր, խառնվում սևացած քարերի վրա նստած մուրի  
հետ և մազութի պես կաթկթում ոջախի քարերի և  
ամանների վրա։

Յերեկով յերբեմն, յերը արև եր անում, շտապ ներս  
ու դուրս եյին անում, տավարը տեղավորում, վայտ

ու աթար բերում, զողղողալով, ձեռքերն իրար քսելով, գնում ջրի, վորովհետեւ արեր մայր մտնելուց՝ յերկինքը ծածկվում եր գորշ ամպերով, ամպերը կախվում եյին, սկսվում եր մի բարակ քամի, վոր ածելու պես կտրում եր, ծակծկում։ Թքեյիր, թուքդ գետին չառած, կսառչեր։ Իսկ մութն ընկնելուց՝ քամին մինչելույս վզգում եր, բորանը պտույտ եր անում, կտուրից կտուր թռչում, յերդիկներից ձյուն մաղում և միլիոնավոր բյուրեղներ շպրտում գռներին, պինդ փակած լուսամուտներին։ Զընգում եյին պատուհանները, և այդ զբնգոցը, քամու զիլ վոռնոցի հետ, սարսափ ու ահ եր տարածում ոջախի, բուխարիկի կամ քուրսումուտ նստոտած մեծ ու փոքրի վրա։

Յես յերբեք չեմ մոռանա ձմբան այդ զիշերը։ Կուչեյինք յեկել քուրսու մոտ, վոտներս կոխել հաստ յորդանի տակ, իրար մոտեցել, ու լսում եյինք պապիս, վոր բարձերին թիկն տված, շորերն առանց հանելու մտել եր տեղաշորի մեջ, պատմում եր մեզ իր գլխով անցած որերից։

Յես եյի և քեռուս տղաները, հասակակից յերեխաներ, Քեռիս, մեզանից մի քիչ հեռու նստած, ապակու կտորտանքով քերում եր յեզան կաշի, ականջը պապիս պատմածին։

— Հա... են ձաք քարը վոր անց կացա, ձին մեկ ել կանգնեց, ականջները խլշեց։ Մի մթնկա յել զիշեր եր, յերկինքը՝ սի, վոչ աստղ կար, վոչ լուսին։ Զին կանգնեց, Ղազար, միտղ ա, մի կապույտ ձի ունեյինք,

վասքերին ել սիպատակ խալեր, — զառնում և  
քեռուս, խոսքը կիսատ թողնելով:

— Որուջին ծախած ձին չես ասում — պատասխա-  
նում ե քեռիս Հայր ու վորդի մտաքերում են կա-  
պույտ ձին: Մենք ել խառնվում ենք նրանց խոսակ-  
ցության:

— Հետո, պատպի... Ձին վոր կանգնեց...

— Հա... ձին վոր կանգնեց, ասի եսաեղ մի բան  
կա... Գլուխս շուռ տվի, տեսնեմ մթնում յերկու պող  
պեճին են անում: Իմ ուսին ել չախմախլու մի հրա-  
ցան եր, կտաներ միանգամից մի բուռ բարութ...  
Անիբավիդ ձենն ել ենքան պինդ եր, թոփի ձենը ձեզ  
որինակ: Նազու աղջիկ, աչքիս չի ընկել, են յարազը  
վորաեղ ես զրել:

Նազու աղջիկը տատս եր:

— Հըեն հացատանը, պարկերի քամակին...

Քեռուս կինը, վոր մալանչների գեղը կողքին կի-  
տել եր, զլխով ու ձեռքով սկեսուրին հասկացրեց,  
վոր հրացանը ուրիշ տեղ ե, հացատանը չի: Յեվ յերբ  
պասլս նրան հարցրեց, թե վորաեղ ե, ով ե տարել,  
քեռուս կինը մոտեցավ, ականջիս վափսաց.

— Ասի ժանգոտել եր, Շալունց Ավանին եմ սովել —  
որբի...

Անխոս եր սկեսուրից, թեկուղ 15 տարվա հարս եր:

— Հետո, պապի... Գայլ եր...

— Արջ եր, արջ, քեզ կուտեր, — ժպատակով պա-  
տասխանեց քեռիս, ձգվեց տեղում, մեջքն աջ ու ձախ

վոլորեց, ջղերը արաք-արաքստեցին, ու նորից կռացավ կաշվի վրա:

Պապս բերանը դեռ բաց չեր արել, յերբ բորանը մի պտույտ ել արեց, ու յերդիկով քամին ներս թռապ, ձյուն մաղեց: Քիչ մնաց ճըազը հանդչեր:

— Տես ինչ ե անում ե... Մեր են դեղը փուլ չտա, հը», Ղազար...

— Զե, վրան սալ քարեր եմ դրել:

Յեկ տեսնելով վոր մեր աչքերը իր կողմն ե, վերակշեց կիսատ թողածն ու շարունակեց՝

— Յես ու յես միտք եմ անում... վեր գամ, գայլ կլինի, վրա կտա, փորձանք կալատահի: Զին ել տեղիցը չի շարժվում, ականջները խլշել ե, գլուխը ծռել... Ի՞նչ ասեմ, վախը կալավ ինձ, չիմացա վոնց չախմախլուն վզիցս հանեցի: Են անտերն ել տեղն յեղած ժամանակ չեր տրաքում, չզիտեմ եղ գիշեր վոնց յեղավ... Աչքս քցեցի են պեծերին... Են եմ հիշում, վոր մի սե բան շարժվում եր, պեծերն ել մթնում վառվում եյին... Հենց չախմախը քաշեցի թե չե, մի որոտաց, մի որոտաց, կասես յերկինքը տրաքվեց... Զին թռավ... Դե հիմա չեմ կարողանում պահել, հրացանն ել ձեռքիս եր...

Պապս սրտի ցավ ուներ, շնչելիս խղզացնում եր, մեկ-մեկ ել հազը բունում եր, հազում եր, հազում, կապտում, գլուխը մորթած հավի շնչքի պես ծռում բարձի վրա: Յեկ սլիտի սպասեյինք, մինչև հանգստանաը, մի խոր շունչ քաշեր:

Յեկ յերբ խոսքի կեսին հազն սկսեց, մենք ավելի կուչ յեկանք: Իսկ քամին հա ձյուն եր շպրառւմ տան պատերին, քամուց դռան դրսի կողմի յերկաթե լեզվակն որորվում եր, զարկում ջաղացի չախչախի պես: — Հասա մինչե Սանդաղըյուր, նոր եղտեղ ձին մի քիչ հանդարտեց:

— Պահ, ինչքան տեղ ա թռել ե...

— Հա... անիրավը շատ սրտոտ եր, դուշի նման եր թոշում: Վերջը յեկա տուն, մի եսպես եսպես բան... Մինը՝ թե արջ կլինի, մեկելը՝ աղվես: Լուսացավ, տեսնեմ մեր Առաքելը՝ ձին նստած, զարպասի մոտ կանգնած: — Առաքել, ես ուր եսպես կանուխ. թե՝ բա չես ասի մեր յերինջը եսա յերկու որ կորած ա, ջանդաքը դիշերս դտել են ծաք քարի մոտ, գլուխը ցըիվ յեկած: Ավանն ասում ե թե առաջ գյուլլով են տվել, հետո ջանդաքը դելերը ցըիվ են տվել... Թե չե գելլ հեյլանի գլուխ չի ուտիլ: Եղտեղ յես լեզուս կծեցի...

Ու սկսեց բարակ, նվազուն ձայնով ծիծաղել: Զեր խմացվում ծիծաղից եր, թե հին ցավից, կրծքի տակ մի բան խզզում եր: Քեռիս ծիծաղից թուլացել եր.

— Դու հո դիշերը քոռ բու յես... Գել լիներ հոկրակիլ չեյիր... կորած յերինջ պիտի լինի, վոր սպանես:

Թեկուզ դեպքը շատ առաջ եր կատարվել, բայց տատս չեր կարողանում ներել նրա սխալը: Յես ուրիշ անդամ ել եմ լսել այդ պատմությունը: Տատս այդ անդամ ել նույն ձևով եր իր զայրույթը հայտնել,

յերբեք չհաշտվելով այն մտքի հետ, թե վախից կարելի յե շփոթվել:

Մի քիչ հետո, ոլազո՞ւ քամու վղղոցին ականջ դրած՝ դարձավ քեռուս.

— Ղաղար, ապրանքի տեղը հո ցուրտ չի...

— Ծակ ու ծուկ պինդ կալել եմ, դռան դուխն ել ծեփել եմ միջի կողմից:

— Են մաղյանը միշտ ջուլած ոլահեք... Հեյվանը ծանրած ա, կմըսի...

Փոքրիկ Սամոնը, վոր պատմության կեսին քնել եր, հանկարծ զարթնեց, աչքերը լայն բաց արավ ու ասաց՝

— Պապի, բա գելը քեզ չկերանվ...

Բոլորս ծիծաղեցինք:

— Գել չեր, բալա, Առաքել աղոր յերինջն եր. — ու քիչ հետո դաբձավ քեռուս. — Ղաղար, Առաքելը յերկու ջուխտ յեղն ել տարել ե...

— Մի ջուխտով ենքան տեղը գերան կը բըլի՛ ևս յեղանակին:

— Նրան ել ինչ ասեմ... ետ մարդը դադար չունի ելի: Հենց ես բորանին պիտի գնան:

Թոնթորաց տասաս, մոտեցավ Սամոնին, վոր մեր ծիծաղից խոռվել, կուչ եր յեկել ու նորից քնով անցել, մոտեցավ ու վերմակի ծայրով ծածկեց:

— Խելք չունի՛, չի տեսնում: Նրանք ես յեղանակին ճանապարհ կգնն: Մենակ նա չի... Սարվանենց տղերքն ել են գնացել, Մուգումին Անդրիասը — ասաց քեռիս, կլածած կաշու մաղերը վեշշերից թափ տալով:

— Նրանք հիմա կրակ են արել, գերանները քցել, ու նստաել կրակի կողքին։ Անստառի մեջ ել հո բորան չի... Եւ, ենքան եմ մնացել անտառում... Նստառում եյինք, կրակը յերկինք եր հասնում, մեջքներս կրակին զեմ եյինք անում։ Ու մին ել մի պախրա, ծառի ճղները պոզին տալով, ծառերի արանքից դուրս եր գալիս, զարմացած նայում կրակին, ելի ճղները կուրատելով փախչում, կորչում... Լուսնյակ վոր լիներ, տեսնում եյինք զայլերին։ Գալիս եյին՝ եստեղ նստում, ենտեղ նստում, ձյունը քանդում, կորչում, ելի գալիս... Բայց վախենում եյին մոտ գալ։ Մենք ել մինչև լույս կրակը վառ եյինք պահում։ Մի գեշեր ել, ողորմածհոգի մեր Սիմոնն եր, յես եյի, մեր Առաքելն եր...

— Ե, գե յերեխեքը ննջում են, թող քնեն, — դարձավ տասս նրան, իսկ մենք աչքներս լայն բաց արինք ցույց տալու, վոր քնել չենք ուզում։

— Նանի, նանի, եղ ել լսենք, հետո քնենք...

— Վեր կացեք, մտեք տեղաշորի մեջ, ելի լսեք...

Տեղաշորը ցուրտ եր, և մենք շատը դրա համար եյինք չեմ ու չում անում, պոռշ կախում։ Բայց տասս իր ասածի կին եր, պրծնում չկար։

— Հա... յես ասեմ, դուք ել շորներդ հանեք... Եղպես ելի գնացել եյինք զերանի... չե, մեղա աստծու, ածուխ եյինք վառում։ Յես ու Առաքելը նստել եյինք կրակի մոտ, ողորմածհոգի Սիմոնն ել փալանները շարել եր, արջի բուն շինել, մտել տակը...

— Պապի, սուս... կասես դուռը չանգոռում են, —  
ասացի յես: Մի վայրկան լոեցինք, նայեցինք դռան  
կողմը: Զայն չկար...

— Քամին եր, ձյունով տվավ, — ասաց պապս ու  
շարունակեց: Հաստ վերմյակի տակ յես ու քեռուս  
յերեխաները կծկվել, գունդ ելինք դառել, մեջք  
մեջքի տված: Ուզում ելինք և լսել, և մեր շունչը  
վերմակի տակ անել, տաքանալու համար:

— Նազու աղջիկ, մի կարպետ ել քցի, յերեխեքը  
կմըսեն:

Տաստ ծալքից մի կարպետ հանեց ու տնքալով մեկ-  
նեց մեզ վրա: Կարպետի ծանրությունը հաճելի յեր  
մեզ համար:

— Զիերն ել կապոտել ենք իրար, դարման ևն  
ուսում:

— Պապի, դուռը ելի չանգոռում են...

— Ղաղար, մի տես ի՞նչ կա...

Քեռիս վեր կացավ, մոտեցավ ու յետ քաշեց դռան  
հաստ կապը: Դուռը բացվեց, ու մեկ ել տեսնենք  
ձյունի մեջ թաթախված մի բան ներս ընկավ, գլոր-  
վեց, ու չորեքթաթ յեկավ առաջ: Քեռիս զարման-  
քից թե վախից բաց դռան մոտ մի քիչ կանգնեց:  
Քամին բաց դռնով այնպիսի թափով ներս թռավ,  
վոր ձյունի փաթիլների սառնությունը մենք ևս  
զգացինք:

— Նազու աղջիկ, Ղաղար, բա չեք տեսնում...

Քեռիս դուռը դրեց ու մոտ վազեց:

Ներս մանողը Առաքել ապոր Ավանն եր, վոր հոր  
հետ գնացել եր անտառից գերաններ բերելու: Յես  
հետո մասքերեցի, վոր տատս շփոթմունքից ձեռքի  
բարձը դրեց խմորով լի տաշտի վրա:

— Ավան, բա Առաքելը...

— Վայ, ապերս մեռավ...

Լեզուն կազ եր ընկել. խոսելիս՝ սառած շրթունք-  
ները հազիվ եյին շարժվում:

— Դազար, շուտ հավար քցի.... թոփ, Դանիելին ձեն  
տուր... Հաբեղին... ձիանքը նստեք...

— Վորտեղ են... բա յեզինքը...

— Լուս խաչերում... յեզինքն ել: Վայ ապեր...

Վայ եր կանչում և տնքում. Շորերը, փափախը,  
տրեխները ձյունով ծածկված, բեղերից, փափախի  
մազերից սառցի կտորներ եյին կախվել. Տնքում եր,  
պլուխը որորում:

— Ա հարս, ինչի՞ յես սառել... Շուտ ջուր դիր... հանի  
չուխան, հանի տրեխները... Մտի քուրսու տակ:

Քեռիս մահակի ծայրին փալասը փաթաթեց, գունդ  
արեց դդումի չափ, կոխեց սև նազթի կարասի մեջ,  
ծլծլալով հանեց ու վառեց ջահը:

— Դազար, յափնջի առ...

Տատս հազիվ հասավ նրան ու դռան մոտ յափնջին  
դցեց ուսերին:

Մենք վախից կուչ եյինք յեկել, նայում եյինք մերթ  
Ավանին, վոր տնքալով պատմում եր, մերթ տատիս,  
վոր ոջախն եր տաքացնում՝ ջուր գնելու:

Պապիս հազն ելի բռնեց:

— Մարվաննենք՝ մի կողմից, Մուգումին Անդրիասը՝ մեկել կողմից՝ թե մի գնացեք, բորան ե, յեղինքը կկոտորվեն, ճանապարհը չեք ճարի... Ապերս թե՝ չե ու չե, պիտի գնամ. բորանն ինձ ի՞նչ պիտի անի...

— Հակառակ հակառակի տղա, — նախատինքով ասաց պապս, յերբ հազը կտրեց, — բեզյառ չեն քշու մքեզ, սպասեյիր ելի...

— Յեկանք... Մինչև կեսոր լավ եր, արե ել կար... Սարը վոր անցանք, ապերս թե՝ ես յերեսը ցուրտ կլինի, բեր մի քիչ արադ խմենք... Մին, երկու քցեց, թե քի... Մլալով յեկանք... Գետի մոտ արել մեր մտավ...

Կտուրի վրայով ինչ վոր մարդիկ եյին անցնում, լսում եյինք վոտների տրփոց: Քեռիս զոռում եր ձիու վրա, վորը դժկամությամբ եր տաք զոմից դուրս գալիս:

— Նազու աղջիկ, Ղազարին ասա շաղ յեկած չգնան, իրար չկորցնեն...

Իսկ Ավանը, վոր մտել եր քուրսու տակ ու միայն գլուխն եր յերեսում, մերթ ընդ մերթ տնքում եր, ասում.

— Վայ, ապերս, վայ... ես ի՞նչ փորձանք եր....

— Լուս խաչերում չկարացի՞ք մտնել են քարի տակ...

— Քարի տակը վո՞րն ա, քարի տակ եր մնացել, ձյունը ծածկել, կորել եր... Խաչերի քարերն ել չեյին յերեսում...

Քանի տաքանում, այնքան ել լեզուն բացվում եր, ուշը յեր դալիս, ավելի մանրամասն պատմում, բայց և ավելի հաճախ ախ ու վախ անում:

—Գետին վոր հասանք, Ալա յեզանը վոտը սլսկաց, սառնը կոտրեց, քիչ մնաց յեզն ընկներ... Ապերը թուավ լուծի վրա, թռնելիս փափախն ընկավ... Վազ տվի, ընկա ջուրը, փափախը ձեռքս ընկավ, տվի իրեն... Հասանք Լուս խաչերը... Ել ճար չկար, վոչ ճանապարհ եր յերեռում, վոչ քար, վոչ սար... Ապերը թե՛ Ավան, յես յեզների մոտ մնամ, դու թոի, հավարը քցի, թե չե ձյունը մեզ կխեղդի... Մինչև հասա, ել ինչ առեմ, տարի քաշեց:

Ու ցածր ձայնով ավելացրեց.

— Ինքն ել մի քիչ քեփով եր... Յուրատը վոր նեղում եր, կանգնում եր, բութույի բերանը բաց անում... Նանի, գնացին...

— Շուտ են գնացել, հիմի կհասնեն...

— Յեզներն ել եյին մոլորվել, փնչացնում եյին, թաղվում ձյունի մեջ... Յերկու գերան թողինք գետի են կողմը... Հիմա ով գիտի՝ ձյունը ծածկել ե... Ապեր, գելերը փորձանք չեն բերի:

— Ես յեղանակին գել կլինի—պատասխանեց պապս:

Լոեցին: Ոջախում կը առ ճատճառում եր, և յերբ բուխարիկով վայր եր ընկում ձյունի մի գունդ, կը առ թշում եր, կարծես դժոհում եր ձյունի սառնությունից: Քամին դադարել եր, ել առաջվա թափով չեր խիում դռանն ու լուսամուտին:

Քիչ հետո դնացողները յեկան։ Բակում լսվեց վուների ձայն, ձիան վրնջոց։ Տատիս դուռը բանալն ու քեռուս ներս մտնելը մեկ յեղավ։ Բաց դռնից տեսանք բակում վառվող ջահերը։ Քեռուս յետեից ներս մտան յերկու հոգի, վորոնք բերում եյին Առաքել ապոր ձյունով ծածկած մարմինը։

— Ղաղար...

Պապիս կանչելու շեշտը քեռիս հասկացավ և, յափնջու ձյունը շեմքի մոտ թափ տալով, պատասխանեց՝

— Միրտը տեղն ա, շունչ ունի... Մի յերկու անդամ ել տնքաց...

Ավանը ուզեց դուրս գալ քուրսու տակից, պապս վրան նեղացավ, ու նա նորից ներս շուլալվեց, այս անգամ հեկեկալով։

Ներս մտան և մյուսները, վորոնց թվում և ջաղացպան Անդրին, վորի սպիտակ միրուքի վրա ձյուն եր նստել, ու միրուքը հաստացել եր։ Զարմանալու յեր, վոր այդ բորանին ջաղացպանը միացել եր նրանց։

— Նազու աղջիկ, բա ջուրդ չտաքացնվ, — դարձալի նա տատիս, վորն առանց այն ել աշխատում եր արագ շարժվել։ Քեռուս կինը տաք ջրով լի կաթսան ոջախից վերցրեց, դրեց գետնին։

— Սա ջրի բան չի... Գոմում թե փեյին կա — դարձավ ջաղացպանը քեռուս, — կիտուկը ճղենք, Առաքելին դնենք մեջը, թե չե ջրով յետ չի գալ։

Ջաղացպանը բարի ու միամիտ մի ծերունի յեր, եր կյանքում շատ բաներ եր տեսել ու լսել, շատ

անգամ եր իր խորհուրդով ոգնության յէկել սրան նրան:

Առաքել ապոր չուխան ու փափախը հանեցին, քեռիս ու Դանիելը թեր մտան, ու կես քարշ տալով, տարան նրան: Այնքան պարզ հիշում եմ նրա քայլվածքը: Առաքել ապերը ավելի դանդաղ եր քայլերը փոխում, քան թե տանողները: Ասես փայտից եյին նրա վոտները, և գետին ջնելուս ել՝ փայտի ձայն եյին հանում:

Քիչ հետո ներս յեկան: Քեռիս ու Դանիելը բահով ճեղքել եյին գոմի մեջ կիտած թարմ աղբի կիտուկը, Առաքել ապոր շորերը հանել և ջաղացպանի ցույց տված ձեռվ նրան նստացրել տաք աղբի մեջ, մինչեւ բերանը ծածկել:

— Մի բուղ եր դուրս գալիս վոր, ասես թոնիր լիներ...

— Եդ բուղը նրան կփրկի. — ասաց ջաղացպանը և տեղավորվեց ոջախի մոտ:

— Եսպես ել փորձանք. — ասաց պապս, յերբ յեկողները նստուեցին: — Սատանի բան ա ելի... Ասաքեզ ով եր ասում ես յեղանակին ճանապարհ ընկի...

— Փորձանքը մարդուց մշտական անպակաս կլինի... — ասաց ջաղացպանը, ձեռքով ոջախից վերցրեց կրակի կտորը, դրեց բարակ ու յերկար կոթով չիրուխի ծայրին և մի քանի անգամ փստացնելուց հետո շարունակեց. — Են տարին ել Սարվանենց ալեորն եր մնացել ձյունի տակ... Յեկա, տեսա փետացած, գերանի

պես մեկնված։ Տարանք ելի փեյինը ճղեցինք, դրինք  
մեջը։ Մի քիչ հետո յետ յեկավ...

— Են հենց եղ ցավից ել մեռավ։։ Ապեց, բայց  
ներսի կողմը փշացած եր։ ասում եյին ջիպյարը սե-  
վացած եր։

— Յեզները բերիք, Ղաղար, — քուրսու տակից  
ձայն տվավ Ավանը։

— Հա, գոմումն են... Ապեր, գնացինք տեսանք լուս  
խաչերի ես կողմին, են մեծ քարի մոտ, յեզները իրար  
կողքի, Առաքել ապերն ել գլուխը կոխել ե յեզների  
փորի տակ... Վոր մոտեցանք, յեզները իրար անցան։

— Հայվանն անլեզու ա, համա մարդու պես հաս-  
կանում ա, — ասաց ջաղացպանը։

— Յես ասի՛ Առաքել ապերը ջան չունի, — ասաց  
ճախարակից քիչ հեռու նստած Դանիելը. — Վոր կըու-  
ների տակից մի յերկու անդամ հուպ տվի, տեսնեմ  
տնքաց...։

— Ենքան ձյունն ել կիտել եր, վոր անասել։ Մեր  
մադյանը վոնց եր վնչացնում։

— Ղաղար, մի բան չլինի հեյվանին, չքուռակատի, —  
ասաց պապս։

— Զե, են հաստ չուլն եյի քցել, համ ել յետելիցս  
եյի քաշում...։

— Անդրի... — ու պապիս հազը նորից բռնեց, հազաց,  
ձեռքը սրտին տարավ, կապտեց, ասես հիմա հազի  
հետ տակն ու վրա պիտի լինեն թոքերն ու սիրտը...  
հետո թուլացավ։

— Այ աղա, ես հաղն ել ձեռք չի քաշում ես հալեվորից, — ասաց Դանիելը։ Բոլորի աչքն ել նըա բարձին հենած զլխին եր։ Ու մի քիչ հետո, խոր շունչ առնելով, պապս շարունակեց՝

— Անդրի, մի տեսեք ի՞նչ յեղավ...

Զաղացուանն ու քեռիս դուրս յեկան։ Դանիելը պատմում եր, թե ինչքան հաստ ելին գերանները, վոր քաշ ելին տվել, անցկացրել գետի այս կողմը։

— Բորան ել չլիներ, մի հաշվվ ե, ելի յեզները ես ձյունին են գերանները տեղ չելին հասցնի... Ամեն մինը ես պարկի հաստոցի չափ։

Դանիելը պատմում եր, բայց պապս անհանգիստ եր, աչքը՝ դուանը։ Տասս տեղավորվել եր մեր գլխավերեւում, բարձի վրա, ձեռքերը խաչել կրծքին։ Դանիելը ուզեց պատմի, թե ինչքան եր Առաքել ասլոր վրա նստած ձյունը, յերբ դուռը ճռուաց ու ներս մտավ քեռիս, հետո՝ ջաղացպանը։

— Հը, Դաղմը...

Քեռիս չպատասխանեց։ Ու յերբ տասս բուռնցքները կրծքին խփեց, հասկացանք, վոր Առաքել ապերը մեռել եր...

## ՎԱՂԸ ՄԱՐՏԻ 8-Ն Ե

Մարանենց հին տունն այդ որը անձանաչելի յեր դարձել։ Մզլոտած ոճորքը սրբել, մաքրել եյին, գետինը լավ ավլել, պատերի ճեղքերը թղթով կալել ու շարվեշար կախ արել նկարներ, կարմիր շորով նկարների չորս կողմը սարքել։ Յեվ այնքան վառ եր յերեսում պատերի վրա կարմիր գույնը։

Յերբ Մարանենց պառավը շեմքից ներս մտավ, զարմացած մնաց։

— Ախչի, ես հո հարսանքամտուն եք շինել մեր դարադամը։

— Մինա հորքիր, դու եգուց արի, հարսանիքն եգուց կտեսնես, — ձայն տվեց Աննան, վոր քթոցի վրա բարձրացած աշխատում եր կարպետի մի ծայրը հագցնել սեպին։

— Բա եր ի՞նչ ա, — հարցրեց պառավ Մինան, միքիչ առաջանալով։

— Ես բեմ ա, բեմ... Եգուց թատրոն ենք տալու, — պատասխանեց կինը և կարպետի ծայրը սեպին հագցնելուց հետո քթոցը մոտեցրեց մյուս պատին, վաղվաներկայացման համար կարպետից վարագույր սարքելու։

Պառավ Մինան մոտեցավ մի ուրիշ կնոջ, վոր թղթեր եր խմորում ու փակցնում պատերին։ Հարցրեց նրան

թե ինչ թղթեր են, գլուխն որորեց, ու իրեն-իրեն խռով, դուրս գնաց: Կանանցից մեկը նրա յետիից չանչ արեց, մյուսը նախատեց չանչ անողին:

— Ի՞նչ ե հասկանում խեղճը, վոր չանչ ես անում...

— Ե՞ն չի հասկանում: Գիտե՞ս ինչ սատանան առ Ասենք հիմա յա խեղճացել: Մարանենց Մինան մի ժամանակ ուներ վոր...

— Զեռքովը զա, հիմա յել կանի, — ձայնեց մի ուրիշ կին, վոր ոգնում եր Աննային՝ բեմը սարքելու:

— Ասում են հարսին գերեզման գցողը սա յե յեղել... Ենքան թուք ու մուր ե տվել յերեսին, ծեծել... Հիմի յեկել ու քաղցր զրույց առ ուղում անի մեզ հետ: Եգուց տես ինչեր ապատմելու մեր մասին...

Աննան և սարքում եր բեմը և կիսականջ լսում ընկերների խոսք ու զրույցը Մարանենց պառափի մասին: Յեկ յերբ բեմից իջավ, վոր հեռվից նայի պատերից կախ կարպեաներին, հանկարծ աչքն ընկավ սեղանին ու սեղանի վրա դրած շալին: Աչքն ընկավ, ու մի վայրկյան աչքը սառած մնաց:

— Հը, զարմացար: Տես ինչ շալ եմ առել, — ասաց շալի տերը, նկատելով Աննայի սառած հայացքը:

— Զե, ենպես աչքս ընկավ... Ախչի, մի տեսեք բեմը պակաս տեղ հո չունի... Ու մինչդեռ այս ու այն կողմից ձայն եյին տալիս, մեկը՝ թե կարպեալ ծուռն ե կախած, մյուսը՝ վոր բեմը լավ ե սարքած, — Ան-

Նայի աչքը շալին եր: Կամաց-կամաց դեմքի ար-  
տահայտությունը փոխվեց, զգաց վոր հոգնել ե, ու  
նստեց տախտակի վրա...

Այդպիսի շալ ուներ և քույրը: Փաթաթվում եր մի-  
ջին, յերեսում եր միայն աչքն ու ունքը: Այնքան սի-  
րուն եր Փառանձեմը ծաղկանկար շալով: Նստում  
եյին տան առաջ, թթենու տակ, խաղեր եյին անում:  
Փառանձեմը տիկնիկներ եր շինում, տալիս իրեն: Յեկ  
իսկույն Աննան պիտի վազեր հարևանի աղջիկներին  
ցույց տալու իր նոր տիկնիկը:

Աննայի միտն ընկավ, թե ինչպես մի անգամ տե-  
սավ քարերի վրա ընկած բարակ, յերկար, պաղպուն  
կտոր... Ուրախացած մոտ վազեց վոր վերցնի, Փա-  
ռանձեմը տեսավ ու ծկլթաց: Քարերի վրա գարնան  
արեի տակ տաքացող ոճը կամացուկ շուլալվեց ու  
պահվեց քարերի արանքում:

Աննան ժպտում եր.

— Են ուր փախավ կտորը...

— Են ոճ եր, ոճ... Վոր բռնեյիր, ձեռքդ կկծեր, —  
ասաց Փառանձեմը ու դրկեց նրան:

Նստում եյին թթենու տակ, ու յեթե տանը մարդ  
չեր լինում, Փառանձեմն Աննային ուղարկում եր  
հարևանի աղջկան կանչելու: Ծնողներն անհաշտ  
եյին իրար, գնալ-գալ չունեյին: Իսկ Փառանձեմն  
ու հարեվանի աղջիկը մոտ ընկերներ եյին: Յեկ  
հենց վոր տանն ել ուրիշ մարդ չլիներ, Փառանձեմը  
կասեր.

— Աննա, զնա Սրբուհուն կանչիր... Համա լեզուդ  
կկարեմ, վոր ուրիշն ասել ես: Ել տիկնիկ չեմ շինի  
քեզ համար:

— Ինչի՞ յես պարապ նստել, Աննա, — ձայն տվավ  
սեղանի վրա թուղթ խմորող կինը, — վեր, գործ արա:  
Եզուց մարտի 8-ը լինի, դու պարապ նստես...

Աննան ցնցվեց, սթափվեց: Չեռքերը մազերին տա-  
լավ, յերեսի վրա կախ ընկած մազերը յետ քաշեց,  
մոտեցավ սեղանին Մի կին պատմություն եր անում:  
Աննան խմորը մասով քառում եր թղթին, դեն դնում:  
Մի ուրիշը խմորած թղթերը փակցնում եր ծխից սե-  
վացած, հարյուր տարվա պատերին:

Մի անգամ ել բակում նստել, միամիտ խաղում  
եյին: Հանկարծ դուռը բացվեց, մայրը ներս մտավ  
ու Փառանձեմին ասաց՝

— Գնա, մազերդ սանրի... Են կապույտ գեյրադ  
ել հաղին Տունը մարդ ա զալու:

— Բա յես...— հարցըրեց Աննան: Մայրը չպատաս-  
խանեց, ավելն առավ և սկսեց արագ-արագ ավլել  
սրանը, գեանին խաիր փռել: Փառանձեմը նայեց, շատ  
նայեց Աննային, ու յերբ մայրը մի անգամ ել կանչեց,  
վեր կացավ ու ներս մտավ տուն:

Մի քիչ հետո Մարտանենց պառավն յեկավ: Ու դեռ  
չեյին քչփչացել իրար հետ մայրն ու Մարտանենց Մի-  
նան, յերբ ներս մտան հայրն ու մի ուրիշ յերկար  
հասակով մարդ, վոր կունալիս գլուխը դռանը զար-  
կեց ու թոնթորաց:

— Ափի, ելի մեր յեզը պիտի ծախսես, — հորը հարցը եց Աննան։ Ի՞նչ ցուրտ եյին այն մարդու մատները, յերբ նա ձեռքը մեկնեց և Աննայի թշերից բռնեց։ Գոմում մի պառավ յեզ կար։ Ամեն գարնան հայրը մտադրվում եր ծախելու, առնողները գալիս - գնում եյին, ու յեզը մնում եր գոմումը։ Այդպես ել մնաց, մինչև վոր մի առավոտ գոմում անշնչացած տեսանք։

Թե ինչ կատարվեց այդ և հետագա որերում, Աննան չեր կարող հասկանալ։ Ու մի որ ել շատ միս բերին, Փառանձեմի համար նոր շորեր առան, յեկան հարեան ու բարեկամ, բակում կրակներ վառեցին ու մեծ կաթսանները դրին կրակի վրա։

Փառանձեմը լաց եր լինում։ Աննան հենց վոր հեռանում եր նրա մոտից, ուրախ-ուրախ թռչկոտում եր։ Յեկողները նրան միրգ եյին տալիս։ Բայց յերբ մոտենում եր Փառանձեմին, ուրախությունը կորչում եր…

Մութը ընկնելուց՝ Փառաձեմը Աննայի հետ կամաց ցուկ անից գուրս յեկավ։ Նա տան յետեին պահվեց, Աննան վազեց Սրբուհու մոտ։ Այն իրիկուն նրանք քիչ խոսեցին։ Հանկարծ մայրն յերեաց։ Փառանձեմը աղաչեց, լաց յեղավ։

— Զան, ել չեմ անի։ Միրտս ուզեց։

Մայրն ել լաց յեղավ Սրբուհու հետ։ Հետո բաժանվեցին։ Տան կողմը ծովելիս, Փառանձեմը յետ նայեց։ Սրբուհին ել եր կանգնել իր աեղում։ Յեկ յերբ տուն մտան, Աննան կամացուկ քրոջը հարցրեց.

— Բա Սրբուհին զիշերս բոստանում պիտի քնի...  
Փառանձեմը կուցավ, համբուրեց Աննային. ար-  
ցունքները կաթեցին նրա աչքերից:

Զուռնի ձայնը յերբ լսվեց, Աննան դուրս թռավ:  
Դարպասը բաց արին, ինչ վոր մարդիկ հարայ-հրոցով,  
դուռնա-դհոլով բակը մտան: Պարում եյին բակում, ծափ  
եյին տալիս: Մեկը բարձր կանչում եր: Դհոլի ձայնից  
դրմբում եր տունը: Գնում-գալիս եյին, մեկը թե՝

— Ախչի, կորի յե. վոանատակ կլինես...

Աննան յետ յեկավ քրոջը պատմելու, թե բակում  
ինչ լավ են պարում, ինչքան շատ մարդ ե յեկել:

Փառանձեմին հագցնում եյին: Մըսում եր: Ծաղ-  
կանկար շալը գցել եր ուսին, լուռ կանգնել: Բարեկամ  
կանայք շորերն եյին շակում, սիրտ տալիս: Ինչու  
եյին մոմ դրել Փառանձեմի ձեռքին: Մոմը դո-  
ղում եր, կըակը թռթոռում եր: Բարակ քող եյին  
գցել Փառանձեմի զվահին, և մոմի լույսի տակ, քողի  
արանքից նրա դեմքը սպրդնած եր յերևում:

Մյուս առավոտ Աննան զարթնեց, զարմացած նայեց  
չորս կողմը: Իր տեղաշորում չեր քնել, շորերը հագին  
եր: Փառանձեմը չկար: Մայրը ուռած ու կարմրած  
աչքերով ներս ու գուրս եր անում, հավաքում աման-  
ները, կարպեաները: Աննան նոտեց տեղաշորում, աչ-  
քերը տրորեց, հետո նայեց մորը: Մայրը մոտեցավ,  
կուցավ ու նրան համբուրեց: Արցունքներն ասես  
մոր համբուրին եյին սպասում, վոր ծլլան: Յերազի  
ուես թվաց Փառանձեմի դեմքը լուսադեմին: Ականջին

ինչ վոր բան ասաց, պինդ համբուրեց: Իսկ Աննան  
տրանջում եր, վոր քունը տանում եւ:

Նույն որն ել գնաց քրոջը տեսնելու: Ուրիշ տուն  
եր, ուրիշ մարդիկ, և այդ ուրիշների մեջ լուռ ու ան-  
խոս Փառանձեմը: Յերկար հասակով մարդը զրկեց  
Աննային, ուղեց համբուրի: Բայց Աննան դուրս թռավ  
նրա զրկեց, վազեց քրոջ մոտ: Բեղերն այնպես եյին  
ծակում, և այնպես վաս հոտ եր գալիս նրա բերնից:

Այդ տանը մնաց մինչև իրիկուն: Բաժանվելիս, Փա-  
ռանձեմը նրան միրգ տվեց, կանչեց մի անկյուն և  
ասաց.

— Սրբուհուն կասես, վոր կիրակի որը մեր բոս-  
տանում ինձ տեսնի: Համա տես, վոր ուրիշին ասել  
ես, ել քեզ տիկնիկ...

Լացը խեղդեց, չկարողացավ խոսքը վերջացնի:

— Եստեղ լավ չի, արի դնանք մեր տուն, — ասաց  
Աննան: Փառանձեմը ժպտաց:

— Դե, մութն ընկնում ա, գնա բալիկ: Նանին հիմա  
մենակ ա: Խելոք կաց...

Գնում եր, գալիս: Մի քանի անգամ Փառանձեմը  
յեկավ իրենց տուն: Առաջվանը չեր: Աննան ուղում  
եր, վոր նստելին թթենու տակ, հավաքում եր գույն-  
զգույն կտորներ, բայց Փառանձեմն ել առաջվա պես  
սիրուն տիկնիկներ չեր սարքում:

— Ել հերիք ա, Աննա... Մարանենց պատերը սաղ  
թղթեցինք, — ասաց կինը, վորը Աննայի խմորած  
թղթերը փակցնում եր պատերին:

Կինն իր պատմությունը դեռ չեր վերջացրել։ Աննան լսով չեր լսել նրա պատմածը... Յերկու ձիավոր ելին... Կարճիկ մարդը հենց նրանց տեսավ թե չե... Այդ ժամանակ Մարանենց պառավը դեռ ջահել աղջիկ և լինում...

— Աննա, համ զբուցին ականջ արա, համ ել սրանից մի հաս զրի, բեմից կախ տանք, — ասաց պատմություն անող կինը, Աննային մեկնելով թղթի մի կտոր և ազա բաց գիրքը։

Աննան գրքից պիտի արաւազրեր մի քանի խոսք։ Փորձեց, լավ գուըս չեկավ... Տառերը խառնվում ելին իրար, շաղվում։ Թուղթը շուռ տվավ մյուս յերեսի վրա...

Ու մի որ ել Աննան գնաց, Փառնաձեմին անկողնում պառկած տեսավ։ Գնացել եր կորեկ քաղելու, թուել եր տովի վրայով, ճմացել եր վոտքը, թաթի խաղը դուրս եր ընկել։ Մինչեւ իրիկուն աշխատել եր արտում, յերեկոյան կաղալով տուն եր յեկել։ Մյուս որն անկողնուց վեր չեր կացել։

Փառանձեմը Աննային յերբ տեսավ, ասես սիրով բացվեց։ Վերմակի մի տուաը բարձրացրեց, Աննան թեք ընկավ նրա կողքին։ Մի կին տաք մոխիր եր լցնում պարկերի մեջ և շուտ-շուտ մոխրով լի պարկերը գնում Փառանձեմի ուռած վոտքի վրա։ Թույրը ցավից անքում եր, կինը սիրտ եր տալիս։

Այդ որը մայրն ել յեկավ։ Աննան անչափ ուրախ եր։ Նրան թվում եր, թե ուրիշի տանը չեն, այլ իրենց։ Փառանձեմը սուտ ե պառկել, վոտքը չի յել ցավում։

Այնպես եր ուզում զլորվել ու խաղալ նրա վերմակի վրա, ինչպես առաջ, յերբ միատեղ եյին քնում:

Մյուս որը Մարանենց Մինան յեկավ: Սպասում եյին դալլաք Սիմոնին: Փառանձեմը մաշվել, դեղնել եր: Գիշերը քունը չեր տարել: Յերբեմն տնքում եր, բայց և վոչ մի խոսք չեր ասում: Դալլաք Սիմոնն յեկավ. վերմակը վեր քաշեցին, և Աննան տեսավ քրոջ ուռած ու սպիտակ վոտքը: Իրեն դուրս տարան:

Բակում ուրիշ յերեխաներ եյին խաղում: Աննան կանգնել եր ու նայում եր նրանց, յերբ հանկարծ ականջովս ընկավ քրոջ ճիշը: Վազեց դեպի դուռը, հրեց. դուռը ներսից փակել եյին: Փառանձեմը ցավից ծկլթում եր, բարձր կանչում: Աննան դուան մոտ լաց եր լինում, ուսով դուռը հրում, բռունցքներով դարկում: Ներսից վոտնաձայն եր լսվում, գնում եյին, դալիս, ամանների շրխկոցի ձայն եր լսվում:

Դուռը հանկարծ բացվեց: Մի կին արնով լի տաշտը դուրս եր տանում: Աննան, ներս վազելիս, կավավ տաշտին, քիչ մնաց տաշտն ընկներ կնոջ ձեռքից:

Փառանձեմն աչքերը բաց ու խուփ եր անում: Սպիտակել եր յերեսը, շրթունքները կապտել եյին: Աննան զարմացավ, թե ինչու Փառանձեմը նայում է ու իրեն վոչինչ չի ասում, չի կանչում՝ կողքին նստեցնում: Դալլաք Սիմոնը արնոտ ածելին վերմակի ծայրին եր քսում և հույս եր տալիս, վոր յերկու որից ուռուցքը կքաշի:

Մայրն անխոս եր: Կռացել եր, յերբեմն ձեռքով սրբում եր Փառանձեմի ճակատի քրտինքը: Միայն

Մարանենց Մինան եր, վոր դալլաքի հետ զըռւցում եր և մի պատմություն անում, թե ինչպես տարիներ առաջ մի ուրիշի զլխին ել այդպիսի փորձանք ե պատահել և թե ինչպես եր նա առողջացել:

— Փորձանք ա, կպատահի... Մարդս վոր կա, մի անգիտուն հեյվան ա... Միայն տերը կարող ա փորձանքը իմանաւ:

Սակայն որեցոր ուսուցքը շատացավ, վերքը թարախոտեց: Փառանձեմը դժվար եր շնչում, չեր կարողանում տեղում շարժվել: Վոչ ուսում եր, վոչ խմում և վոչ ել խոսում: Յերբեմն աչքերը բաց եր անում, նայում սրան նրան, շրթունքները շարժում, բայց ձայն չեր լսվում, թեկուզ կռանում ել եյին և ականջները մոտեցնում բերանին:

Ու մի անգամ մայրը նայեց աղջկա դեմքին, շարժվող շրթունքներին, Աննային ասաց.

— Սրբուհուն ա ուզում, Աննա, գնա կանչի...

Յերբ Սրբուհին ներս մտավ, Փառանձեմը ժպտաց: Չկարողացավ վոչ մի խոսք ասել:

Աննան տեսավ, թե ինչպես Սրբուհին, աչքերը սրբելով, դուրս յեկավ սենյակից, մի անգամ ել յետ նայեց բաց դռնով և նրան կանչեց:

— Գիշերս գնանք մեղ մոտ, Աննա, նանիդ ու հերդ եստեղ են մնալու:

Առավոտ կանուխ, յերբ Սրբուհու հետ միասին Աննան մոտեցավ Փառանձեմենց բակին, ներսից վայնասունի

Ճայն լսեցինս Սրբուհին թողեց Աննայի ձեռքը, և մազերը  
քանդելով, ներս վազեց։ Փառանձեմը մեռել եր...

— Ինչ յեղավ, Աննա, հ՞ը, եդ ինչ ե աչքերդ ջրա-  
կալած են, — հարցողեց կինը, վոր պատմությունն  
արդեն վերջացրել ու նայում եր, թե ինչպես ե Ան-  
նան շուռ ու մուռ տալիս թուղթը։

Աննան փղձկաց, արցունքները թափվեցին սովիտակ  
թղթի վրա։

— Ինչու յես լալիս, Աննա... Գիտ հո չես... Եզուց  
մարտի 8-ն ե, դու ճառ ես ասելու...»

— Հեջ, միտս յեկավ մեր Փառանձեմը, — ասաց  
Աննան և արցունքները սրբեց։ Տիրեց լոռությունն

— Թե վողջ մնար, հիմա մեր միջի առաջավորը  
կլիներ...»

— Ենքան եղպես անտերունչ ու անխոս մեռել են...  
Ի՞նչ եր մեր հալը, կարող են հիմա զուռվ պսակեն,  
դալլաք Սիմոնին կթողնեյինք, վոր նշանարեր...»

Աննան ունքերն իրար հավաքեց, մոտեցրեց թա-  
նաքամանն, ու վետուրի ծայրով թղթի վրա մեծ տա-  
ռերով գրեց։

Խորհրդային  
հշիմանուրունը  
Տես անկարուրուն  
Ռերեց Կեցց և  
Մարդի 8-ի ոռնը

Հետո վեր կացավ, գրածը կախեց բեմի ճակատից,  
մի քիչ նայեց ու թեթևություն զգաց:

Մութ եր, յերբ կին ու աղջիկ ցրվեցին դյուղի ծուռ  
ու նեղլիկ փողոցներով: Ու հեռվից իրար կանչում ելին՝  
— Աղջկերք, եգուց կանուխ կզաք, մարդ շատ  
կլինի, բոլորին խմաց կանեք...

Աննան քայլում եր մյուսների հետ: Վճռական և  
ուրախ շեշտ կար նրա ձայնի մեջ, յերբ ընկերներից  
բաժանվելուց հետո դյուղի խաղաղ փողոցում բարձր  
կանչեց՝

— Աղջկերք, վաղը մարտի 8-ն ե...

---

## ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Իրիկնապահին՝ Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարպասի նիշն եր, վորի ներքեկի մասը գետնից մի մետրաչափ բարձր կոկիկ տաշած եր, քարե աթոռի պես սարքած։

Կնստեր իր տեղը, յերկու ձեռքով հոնի կարմիր մահակի կոթից բռնած, գլուխը մի կողմի վրա կթեքեր, և յեթե զրուցընկեր չունենար, ինքն իրեն կխոսեր ու քթի տակ կժպտար։ Նրա կապույտ աշքերը ժպտալիս փոքրանում ելին, և աշքի տակ մանրիկ, բարակ կնճիռները ծալվեծալ շարվում ելին կողք-կողքի, ակոսների պես։

Դարպասի մոտ իրիկնապահին նստելը պապիս հին սովորությունն եր, կովերը արոտից ելին տուն գալիս, յեզները՝ վարից, հոգնած ու դանդաղ քայլերով՝ պառավ ատամների տակ ծամելով ճամբի յեզրից փրցրած մի փունջ խոտ։ Ու նստած տեղից մեկ ել տեսար մեկն ու մեկին մի բան պատվիրեց.

— Եզուց Ալա յեզը վարի չտանեք, — կամ թե՝

— Մի տեսեք են քուռակն ինչի՞ յա կաղում։

Հետո պիսի վեր կենար, ցըված խոտը հոնի փայտով հավաքեր, մոտեցներ Ալա յեզին, կամ կաղ քուռակի վոտքը շոյեր։

Մութն ընկնելուց ժամի զանգերը ծլնգում եյին։  
Առաջին ծլնգոցին փափախը պիտի հաներ, խաչակնքեր,  
թեկուղ այդ պահին Ալա յեղան կողքին ել կանգնած  
լիներ։ Յեվ խաչակնքելիս, հոնի փայտը ձեռքից բաց  
չեր թողնում։

Մենք բոլորս ել զիտեյինք, վոր խաչակնքելուց  
հետո պապս ձայն ե տալու։

— Նազու աղջիկ, զոները բաց արա…

Նազու աղջիկը տառս եր, ծերությունից մի քիչ  
կուցած, ականջի մեկն ել խուլու Յեվ Նազու աղջիկը  
դռնակը պիտի բաց աներ. դռնակը պիտի ճռուար,  
ծլվստար, ինչպես սայլի անիվը սառույցի վրա։

Դուան շեմքին նստելը մի ուրիշ նպատակ ել ուներ։  
Գյուղի մեծ փողոցը մեր տան առաջովն եր անցնում։  
Ուրիշ գյուղից յեկողը առաջին անգամ մեր տան կող-  
քով պիտի գնար։ Անց ու դարձ անողները, հանդից  
տուն գարձողները՝ վորը մի խորձ խոտ շալակին, վորը՝  
լուծի կապերն ուսին ու բեղարած յեղներն առաջն  
արած, վորը՝ եշի վրա, վոտները գետնին քսելով, — մի  
խոսքով, իրիկնապահին ով անցներ փողոցով, պապիս  
«բարի իրիկուն» պիտի տար։ Պապս ել նրանց պիտի  
հարցներ, թե վարը պլքծան, կամ թե սարի այս ինչ  
խոտն ինչպես ե։ Ու մենք զարմանում եյինք, թե  
վորտեղից գիտի նա՝ ով ուր ե գնացել և ինչի։ Մի  
անծանոթ մարդ յեթե անցներ փողոցով, պապս հան-  
կարծ մեզնից մեկն ու մեկին կասեր.

— Հենց եր դարիք մարդ լիներ... Մի վազի, կանչի,  
թող մեր տունը գա...

Վաղում եյինք, և մինչև չիմանայինք, թե ում  
հյուրն ե, նրան բաց չեյինք թողնում:

— Պապի, Են դարիքը իսաջանենց դոնաղն եր,  
նրանց տուն գնաց:

Յեվ պապս պիտի միտք աներ, թե նորեկը իսա-  
ջանենց վորի՞ հյուրն ե, յերբ և յեղել նրանց տանը,  
ի՞նչ ծանոթություն կա նրանց մեջ: Յեթե կասկա-  
ծեր, կնոջը պիտի հարցներ.

— Նազու ազջիկ, հերու յեր թե սեկ ել տարին,  
Են վոր իսաջանենց Աղամյի տղան սարուշենցի բրու-  
տին բերեց: Են դարիքը նմանեցնում եր սարուշենցի  
բրուտին:

Տատս, յեթե խուլ ականջն եր դարձրել նրա կողմը,  
պիտի գլուխը թեքեր, մի անգամ «հը» ասեր ու նոր  
միայն իր կարծիքը հայտներ սարուշենցի դարիքի  
մասին:

Տավարը տեղաց անելուց հետո, յեթե ամառվա  
գիշեր եր, պապս տնքանքալով պիտի բարձրանար  
թախտը, արխալուղի կոճակներն արձակեր ու մի սպի-  
տակ շոր գլխին կապեր, արտում շոդ ցերեկին հունձ  
անողի պես: Հողե գավաթի մեջ սառած սպասից մի  
քանի գդալ ուտելուց հետո պիտի թիկներ բարձի  
վրա ու քներ:

Առավոտ ծեզին ամենից կանուխ նա յեր վեր կե-  
նում: Քաղցը քնի մեջ, մանավանդ յերբ լուսաբացի

զովն ել մի քիչ պաղեցնում եր ոդը և քունն ավելի անուշ դարձնում, պապիս ձայնն եյինք լում.

— Դե՛ վեր եք, հրեն ե՛, արեր գուրս յեկավ հա...

Մենք ավելի ներս եյինք շուլավում, կոլոլվում վերմակի մեջ ու սկսում սուտ խռմփացնել։ Ու մեկ ել մի ձեռք վերմակի տակ խտղտացնում եր մեր վոաքերը, նրբանի կաշին։ ծլոնդ եյինք անում, նստում անկողնում ու ճմռում քնափ աչքերը։

— Դե՛ հա, վեր եք... տղամարդն ել եղքան քնի... հրես ձմեռը ենքան արջաքուն տա՞ք... — ասում եր ու հոնի փայտի ծայրով դիսլչում մեր մարմնի բաց մասերին, փշտացնում, ինքն ել մեղ հետ ծիծաղում։

— Վեր եք, յես ձեր ժամանակ կարգին տղամարդ եյի... Հրես ձեր պսակվելու վախտը մոտենում ա հա, վեր եք...

Մենք այն ժամանակ 8—10 տարեկան յերեխաներ եյինք։ Ու պիտի վեր կենայինք, քնաթաթախ աչքերով չջոկեյինք, թե ով ում տրեխն ե հագնում, պիտի կըուվեյինք իրար հետ, թե ով ե յեզները տանելու, ով ե վարի գնալու։ Բայց, իհարկե, ավելորդ եր մեր խոռքն ու զրույցը, վորովհետեւ պապս արգեն վորոշել եր աշխատանքը, իսկ նազու աղջիկը մեր պաշարը կապել եր, շարել բակում տնկած ցից փայտերի վրա։

Յեվ ամեն արեծագի սկսում եր գյուղի առորյան՝ չափած, հաշված։

Զմեռն եր լավ։ Աշխատանք քիչ կար, տակարը գումումն եր, խոտն ու դարմանը մարագում։ Պապս ել

դարպասի քարին չեր նստում, վոչ ել պառկում եր  
բակում՝ թախտի վրա։ Նրա փոխարեն, արև որերին,  
հավերը, սառած գետինը կոխ տալով, մոտենում եյին,  
վիզները յերկարում, թոշում ու շարվում թախտի  
վրա, գլուխները ծածկում թեփ տակ։

Պապս քուրսու մոտից չեր հեռանում։ Շատ քիչ  
անդամ կմտներ գոմը, իսկ գյուղի հրապարակը գնալու  
սովորությունը չուներ։ Կնստեր, մի շալ ել ուսին  
կցցեր և կմտմտար, յեթե մենակ լիներ, կժպտար  
քթի տակ՝ բարի և անչար մարդու ժպիտով։

Զմեռ որերին հյուրն անպակաս եր։ Ով ել լիներ,  
ինչ գործով եր լիներ, մի որվա փոխարեն, յերկու-  
յերեք որ եր պահում։ Ու յեթե հեռու գյուղերից  
մեկն ու մեկը, իր վաղեմի ծանոթը կամ թուրք «քիր-  
վան» նրան այցի գար, մեր տունը դառնում եր հար-  
սանքատուն։ Նստում եյին մինչև աքլորականչ, հին  
անցած որերից պատմում, իրար հարցնում, մեռած  
մարդկանց վերհիշում, վաղուց անցած դեպքեր ու  
անթիվ անհամար պատմություն։

Մենք ել նստում եյինք այնքան, մինչև քունը հաղ-  
թեր, գլուխներս կախ եյինք անում քուրսու թախ-  
տին, մինչև տատը բոթեր մեզ, զարթնեցներ ու վեր  
կենայինք, վորպեսզի՝ վերմակի տակ պառկած՝ մի քիչ  
ել լսեյինք նրանց զբույցը։

Անոտիապաշտ ու նահապետական վարք ու բար-  
քով մարդ եր։ Այնքան անդամ եր պատմել իր գլուխ  
անցածը մեզ ու հյուրերին։ Յեվ հենց խոսքի կծիկը

յետ տար թե չե, մենք պիտի իմանայինք, թե վորն է պատմում՝ այն, ինչ յեղավ դյուղի ներքեկի ավերակ մատուռում, յերբ ջահել ժամանակ ընկերների հետ զրադ եր բռնել, դիշերով գնացել, վոր փափախը դնի մատուռի ներսում, ու մի աղվես դուս եր թռել, վախից գյուղի ճանապարհը կորցրել ու մինչև լույս բռատաններում պտույտ եր տվել. կամ այն, թե ինչպես սարում գայլերը հարձակվել են ձիու յերամակի վրա, ինքը պահվել եր ձիյերի արանքում, մի կերպ աղատվելու Յեզ պապս պատմությունն անելուց միշտ՝ կամ ջահել որերին յերանի պիտի տար, կամ ել առանձին շեշտ տալով խոսքին, հայտներ, թե՝

— Աշխարքս միշտ կմնա, ասա մարդը սիերես չլինի...

Աշխարհից, չար ու բարուց անտեղյակ միամիտ յերեխաներ եյինք։ Ու մեզ համար ամենից հզորն ու սարսափելին գյուղի գզիրն եր։ Տանուաերը, վոր հարեան գյուղում եր նստում, մեր գյուղի գործերը գզիր իբրահի ձեռքով եր տեսնում։ Մեկ ել կտնկվեր կտուրին, կամ կկուանար յերդիկի վրա ու կկանչեր.

— Քյոլսվից հրաման կա... տերության խարջը յերեք որում ուզում են։ Չտվողին՝ Սիբիր...

Յեթե հրամանը հասարակ ել լիներ, իբրահը սպառնալիքով պիտի վերջացներ խոսքը։ Վոչ սի խնդիր, վոչ մի աղերս չեր կարող կակղեցնել նրա սիրտը։

— Ուզում ես թագավորի հողից ինձ քոչացնեմս... Զե, չե, բեր։ Յես ինչ պատասխան պիտի տամ քյոլս-

վին: Ուզում ես խալիսի մեջ ինձ խայտառակ անբ: Չե, չե, բեր, չբերողին՝ Սիրիր...

Գվիր իրիշը մեղ սարսափելի ու հզոր եր թվում, վորովհետև պապս, վոր մեր աչքում անվախ մարդ եր, գայլի հետ կոխ կացած, — պապս ել եր խեղճանում, յերբ գվիրը կանչում եր յերդիկից, կամ թե մոտենում եր դարպասի քարին նստած պապիս, շատ չոր ու կոշտ կերպով հայտնում տանուտերի հրամանը:

— Աղ ու հացը քոռացնի աչքերդ, իրիշ...

Պապս եր ասում, յերբ գվիրը հեռանում եր այնքան, վոր ել նրա խոսքը չեր լսի:

Յեկ ամեն անգամ, յերբ դար ու զնար իրիշը, պապս տնքալ եր սկսում, դեմքի ժայռալ կորչում եր, մոռանում եր մեղ ել, տունն ել, յեզն ու կովն ել: Ամեն մի այցից հետո նա խոր թառանչով պիտի ասեր.

— Ախ, Յեզոր, մի եստեղից դուրս գայիր... Յարաբ, մշք ա լինելու քեզ տեսնեմ:

Այդ վոր ասեր, մենք ել եյինք տիսրում, թեկուզ մեղանից վոչ վոք չեր տեսել մեր քեռի Յեզորին, վորին տարիներ առաջ բռնել ու աքսորել եյին: Մինչև վերջն ել հայտնի չեղավ, թե ինչու յեն նրան բռնել: Գիտեյին միայն, վոր գինվոր յեղած ժամանակ ընդդիմացել ե, իրրե թե հրացան քաշել: Մեզ համար մութ եր այդ պատմությունը, չեյինք տեսել վոչ նրան, վոչ ել գիտեյինք այն յերկիրը, վորաեղ, ինչպես պապս եր ասում, «ամառ, ձմեռ՝ ձյուն ե»: Իր վորդու մասին պապս չեր ուզում խոսել մեղ հետ, և

յեթե ձմրան զիշերներին, քուրսու մոտ նստած, հյու-  
րերից մեկն ու մեկը պատահմամբ հիշեցներ նրան  
այդ մասին, անզգույշ հարց տար, պապս «Եհ» պիտի  
աներ, ուսերը թոթվեր և մի քիչ լուռ մնալուց հետո  
այլ զրույց աներ:

Այդ դեպքը մի ստվեր եր մեր լույս որերի վրա:  
Մեծերը տխրում եյին, տասս սանդուղում պահած  
վորդու զուլպաներին նայելիս, աչքերից ծլլացնում եր,  
գլուխն յերերում: Յեվ յեթե հարցնեյինք նրան, թե  
հեռո՞ւ յե նրա տեղը, պատասխանի փոխարեն պիտի  
կուանար, համբուրեր մեզ, մի-մի բան ել ձեռքնե-  
րիս դներ, մեզ ուրիշ խոսք ասեր:

Սակայն ամիսներով մոռացվում եր այդ պատմու-  
թյունը: Վար ու ցանքի յետեից եյինք ընկնում, լու-  
սարացից մինչև իրիկուն աշխատում եյինք, և մեզ  
թվում եր, թե մեր տանը վոչինչ չի պատահել, վոչ  
վոք չի պակասել, վոչ մի հոգս չի ծանրացել մեր  
տան գլխին:

Բայց հերիք եր մի աննշան դեպք, վոր պղտո-  
րեր պապիս սիրար, ու մեզ ել դարձներ մո-  
լոր: Գալիս եյին հյուր, ու հանկարծ գալիս եր  
և մեկը, վորի հետ քեռիս ընկերություն եր արել: —  
միասին վոչխար են պահել, կամ գնացել են անտա-  
ռից զերան բերելու: Յեվ քեռուս հին ընկերը այդ  
զիշեր մեր տունը պիտի դարձներ սզի տուն, պապս  
ընկճված ձայնով պիտի խոսեր նրա հետ, ավելի շատ  
հառաջեր, իսկ տաստս նրան պիտի հյուրասիրեր առան-

ձին գորովով և ամանը կերակրով լցնելիս, պիտի արցունք կաթեցներ տաք ապուրի մեջ:

Սարսափելին անհայտությունն եր և այն հակասական լուրերը, վոր մերթ ընդ մերթ լսվում եյին հարևան գյուղերում և վորպես փափսուկ հասնում պապիս կամ տատիս: Մերթ լսում եյինք, վոր նրան տեսնող ե յեղել, այս ինչ քաղաքումն ե ապրում ուրիշի անունով, պապս ձի յեր նստում, գնում լուրը ստուգելու և հուսահատ վերադառնում: Մերթ պատմում եյին, թե սահմանն անցել ե, գնացել իրանի հողը, իբր թե նամակ ե ուղարկում, բայց նամակը բռնում են, տեղ չեն հասցնում:

Սոսկալին այդ անհայտությունն եր, վորովհետև յեթե ստույգ իմացվեր, վոր նա յել չկա, լաց կլինեյին ու մորմոքը կհալվեր տարիների հետ: Անթեղնած կրակ եր նրանց վիշտը, վոր մերթ բոցավառվում եր, վորպես պայծառ հույս, մերթ դառնում մարմրին տվող տկար կայծ:

Պատահում եր, վոր ձմրան գիշերին մեզնից մեկն ու մեկը հանկարծ զարթնում ու զլուխը հանում եր վերմակի տակից: Այդ գիշերներին շատ անզամ եյինք տեսնում տատիս ու պապիս քուրսու մոտ նստած՝ ննջելիս: Տատս հանկարծ սթափվում եր, աչքերը տրորում, մոտեցնում բրնձով լի ամանը, մի բուռ բրինձ թափում քուրսու կարպետին, մատով մեկ-մեկ բրինձն ընտրում: Խոսում եյին իրար հետ, համարյա ամեն գիշեր նույն ձեռվ, նույն հանգով:

- Բա ի՞նչ ասաց: — Կտեսնեմ, — ասում եր, — շատ ա դժվար...  
— Հը՞:  
— Դժվար ա, դժվար...  
— Տվածնիս աչքերն առնի, բա հիմա ինչ ա ուզում...  
— Ճարներս ի՞նչ, պիտի տանք... Տեսնենք մի խա-  
բար կըերի...

Ու մենք հասկանում եյինք, թե կա մի մարդ, վոր  
յեթե մտքում դնի, ստույգ լուր կըերի Յեգոր քեռուց:  
Ո՞վ եր այդ մարդը, մենք չգիտեյինք: Հայտնի յեր,  
վոր յերբեմն զզիր Իրիշը մեր տնից յուղ ու պանիր  
եր տանում նրա համար: Մի անգամ ել յերկու վոչ-  
խար տարավ ու հենց գոմի շեմքին յերդվեց, վոր  
անպատճառ կասի նրան: Գզիրը միջնորդ եր, վոչ-  
խարը քշեց հարևան գյուղը, վորտեղ ապրում եր տա-  
նուտերը և վորի տանը շատ հաճախ լինում եր պրիս-  
տավը:

Աշնան մի որ պապս, վոր առավոտ կանուխ ձի յեր  
նստել ու գնացել հարևան գյուղը, ուրախուրախ  
ձիուց իջավ, սանձը շտապով հանեց ձիու գլխից, ու  
մինչև ձին ներս կմտներ գոմի գոնով, շտապեց մեզ  
հայտնելու, վոր տանուտերից հաստատ տեղեկա-  
ցել ե, վոր քեռիս վողջ ե և գտնվում ե այս ինչ քա-  
ղաքում:

— Անունն ի՞նչ եր են անտերի... Տես ե, հուշ եմ  
ասել: Լեզվիս պակին եր, ամբողջ ճանապարհին ասում  
եյի, վոր մտահան չանեմ:

Հարկավոր եր խնդիր ուղարկել ամենաբարձր տեղը՝  
հենց իրեն՝ ոռւսաց թագավորին, ինչպես ասել եր տա-  
նուտեքը:

Մեզ հեքիաթի պես եր թվում պապիս պատմածը:  
Յեվ մինչդեռ տասս ուրախությունից շփոթվել ու  
անվերջ աղ եր լցնում ապուրի մեջ և խառնում,  
մենք զարմանքով եյինք նայում մեր կարճիկ, մազը  
սպիտակված պապին, վորի կապույտ աչքերը պայծա-  
ռացել, վառվում եյին հույսից, հրճվանքից:

Ինչպես ե գնալու նամակը:

— Պապի, թագավորը նամակդ վոր ստանա, ի՞նչ  
պիտի անի:

— Կկարդա, հրաման կտա պրիստավին, վոր Խուր-  
շուդով թեգորին վորաեղ վոր ե սաղ - սալամաթ հաս-  
ցրեք իրեն հորը:

— Բա վո՞նց ա գնալու նամակը:

— Եհ, դուք հլա աշխարքի վորաեղն եք: Փոշտ  
կա, յասառուլ կա, պրիստավ կա: Տանելու յեն, թա-  
գավորի ձեռքին դնեն: Քյոխան ասում եր, վոր պար  
լավ թղթի վրա զրել տաս, դալամն ել վոսկի պիտի  
լինի, թե չե ընդունիլ չեն:

Ու մանկան վառ յերեակայությամբ պարզ տես-  
նում եյինք վոսկե գրիչը, վոր պապիս խնդիրքն ե զրում  
սպիտակ թղթի վրա, և խոսքերը պսպղին են տալիս,  
նամակը թռչունն իր թեով, սարերի վրայով հաս-  
ցնում ե վոսկի մի տուն, նամակը դնում ե թագա-  
վորի ձեռքին:

Այդ իրիկուն սաստա պանրի յուղու կտորները ջուկեց, լցրեց մի մորթու մեջ, բերանը պինդ կապեց: Յեվ յերբ պատս պատվիրեց պոչը ծաղիկ յերինջին առավոտ կանուխ լավ խոտ տալ, մենք հասկացանք, վոր նա յուղ ու պանրի հետ քաղաք ե տանելու և պոչը ծաղիկ յերինջին, վոր մեր բոլորի սիրելին եր, մեր աչքի լույսը:

Սակայն վոչ վոք չառարկեց: Առավոտ կանուխ բոլորս վոտքի եյինք և մեզանից ամեն մեկն աշխատում եր մի քիչ ել շոյել յերինջի մեջքը, խոտի մեջ յեղած չոր ծաղիկները ջոկել և տալ նրան: Պապս ձիու թամքին կաղեց յուղն ու պանիրը և յերինջին առաջ արավ: Դարպասից դուրս գալուց, յերինջը յետ նայեց գոմի կիսաբաց զոնին ու բառանչեց: Գոմից նրան ձայն տվեց պառավ Սոնա կովը:

Յերբ ձին ու յերինջը ծածկվեցին բոստանի պատերի յետեւ ու միայն պապիս փափախն եր յերեռում, վոր ասես սի կատվի պես վազում եր պատի վրայով, մի քիչ ել կանգնեցինք ու մեկ-մեկ ներս մտանք: Տաստ սանդուղի առաջ կանգնել, հանում եր գուլպաները, կրծքին սեղմում, որորվում, ասես գուլպաներ չեյին, այլ վորդու գլուխը:

Յերկու որ հետո պապս վերադարձավ: Միրզա-Դավիթին եր զըել տվել խնդիրքը ու տանուտերի ոգնությամբ հանձնել փոստին: Պոչը ծաղիկ յերինջն ել եր դնացել, յուղն ու պանիրն ել: Փոխարեն պապս բերել եր թղթի փոքրիկ մի կտոր, վոր տվել եյին նրան նամակ ընդունելուց հետո:

— Նազու աղջիկ, լավ տեղ դիր, աչքի լույսի պես  
պահիր: Պատասխանն եղ թղթովս ա գալու... Թե  
վոր կորավ...

Ցեվ փոքրիկ թուղթը, վոր մի քանի կտորի մեջ  
փաթաթելուց հետո տատո դրեց սանդուղի մի անկյու-  
նում, մեզ համար դարձավ և ամենից թանգը, և  
յերկյուղավին:

Ի՞նչ կար այդ փոքրիկ թղթի մեջ, ուր ե մեր պոչը  
ծաղիկ յերինջը, մորթեցին թե բառանչում ե ուրիշի  
գոմում: Միտք եյինք անում այնքան, վոր հոգնում  
եյինք, քնում ու յերազի մեջ տեսնում, վոր յերինջը  
խոտի տեղ թուղթ ե ուտում ախոռում...

Մի ձմեռ անցավ, նամակի պատասխանը չեկավ:  
Ամբողջ գյուղը գիտեր այդ մասին, և պատս մի տեսակ  
պարծանքով եր ասում, վոր ինքը ոռւսաց թաղավորին  
նամակ ե գրել: Մեր տուն հյուր յեկողներին նա  
պատմում եր՝ թե ինչպես ե Միրզա-Դավիթը գրել:

— Ե, մենք ել ասենք ապրում ենք: Ենպես դա-  
լամ ունի անիրավը... Ինձ վոր տեսավ, յերեսին նա-  
յեց, թե Արություն ապեր, ուզում ես ասեմ, ինչի  
յես յեկել ինձ մոտ: Ասաց թե դու ուզում ես, վոր  
թաղավորին նամակ գրեմ Ցեղորի մասին: Մնացի չո-  
րացած: Վերջը գրքերը բաց արեց, կարդաց, կար-  
դաց, մինը դրեց, մյուսը հանեց, որենքը դաշավ:  
Վոսկի դալամը գրեց թղթի վրա... Մի զարմացք եր  
վոր... Եղակես ել զիր, եղակես ել զորություն...

ևողին ել իր հրացմունքն եր հայտնում Միլզա-  
Դավիթից, և պատմում, թե ինչ հրաշք գործեր ե կա-  
տարել նա:

— Նրա զալամը քարին ել դնես, քարը կճաքի...

Զմեռն անցավ: Ամենից անհամբերը մենք եյինք:

— Պապի, բա պատասխանը ինչո՞ւ չի գալիս...

— Այ վորդիք, հենց իմանմում եք թե թաղավորը  
ունի չունի եղ հոգսն ունի: Կոփլ կա, ժողովուրդին  
կերակրել կա: Որը յես հազար ասեմ, դու յերկու  
հազար իմացի. Եղքան նամակ ու խնդիրը ա ստա-  
նում: Հալքաթ մի որ ել մերը ձեռքը կհասնի... Բա  
ես թուղթը ինչի՞ համար են ավել... Եղպես ել վրան  
զրած ա. — Արություն Խուրշուղովից նամակ ոռւսաց  
թաղավորի վրա:

Գարունը յեկասի: Մի որ ել զզիր իբիշը ձայն տվավ,  
վոր հարեան զյուղում ժողով կա:

— Թաղա պղիստավ են դրել, այ ժողովուրդ, թաղա  
քյոխավա յեն ընտրելու, տունը մի մարդ: Զեկողին՝ Միլիր:

Տանուտերի ընտրության պապս չգնաց: Ալա յեզը  
այդ որը տնքում եր, քթածակերից վալինքախառն  
արյուն եր գալիս: Պապս հաճախ գոմն եր գնում, նա-  
յուն յեզան, պատվիրում վոր տաք մոխիր բերեն կամ  
ել ժամերով շոյում եր մեջքը, վաղաքշական խոս-  
քեր ասում:

Մի քանի որ անց, յերբ հիվանդ յեզը վոտքի յեռ  
կանգնել, ու վոտքերը զգուշությամբ վոխելով, հոտը

Դաողն ել իր հիացմունքն եր հայտնում Միքայ-  
թավիթից, և պատմում, թե ինչ հրաշք զործեր ե կա-  
ստրել նա:

— Նրա զալամը քարին ել գնես, քարը կճաքի...

Զմեռն անցավ: Ամենից անհամբերը մենք ելինք:

— Պապի, բա պատասխանը ինչու չի գալիս...

— Այ վորդիք, հենց իմանմամ եք թե թագավորը  
ունի չունի եղ հոգսն ունի: Կոփլ կա, ժողովուրդին  
կերակրել կա: Որը յեռ հազար տսեմ, դու յերկու  
հազար իմացի. Եղքան նամակ ու խնդիրը ա ստա-  
նում: Հալլաթ մի որ ել մերը ձեռքը կհանի... Բա  
ես թուղթը ինչի՞ համար են տվել... Եղակես ել վրան  
զրած ա. — Արություն Խուրշուզովից նամակ ստուաց  
թագավորի վրա:

Գարունը յեկտով: Մի որ ել գզիր իբիշը ձայն տվավ,  
վոր հարեան դյուլում ժողով կա:

— Թագա պրիատավ են զրել, այ ժողովուրդ, թագա  
քյոխիա յեն ընտրելու, տունը մի մարդ: Զեկողին՝ Միքիը:

Տանուտերի ընտրության պապս չկնաց: Ալա յեզը  
այդ որը անքում եր, քթածակերից փալինքախառն  
արյուն եր գալիս: Պապս հաճախ գոմն եր գնում, նա-  
յում յեզան, պատվիրում վոր տաք մոխիր բերեն կամ  
ել ժամերով շոյում եր մեջքը, փաղաքշական խոս-  
քեր ասում:

Մի քանի որ անց, յերբ հիվանդ յեզը վոտքի յեռ  
կանգնել, ու վոտքերը զգուշությամբ փոխելով, հոտ-ը

տում եր դետինն՝ ու բակի քարերը լիզում, պասլս  
իր սովորական տեղում նստած, հոնի մահակին  
հենած, աչքը ճանապարհին եր, հանդից տուն դար-  
ձողներին։ Ու մեկ ել յերեաց զզիր Իբիշը, մոտեցակ  
ու ասաց.

— Թագա պրիստավլը քեզ եղուց առավոտ կան-  
չել ա։ Վախտով ենտեղ լինես։ Թե չե… ասում են  
չար մարդ ա…

— Խել լինի, Իբիշ…

— Հաստատ տեղեկություն չունեմ. ինձ միայն  
հրամայված ա եղպես…

— Ո՞վ ասեց քեզ։

— Թագա քյոխվեն, Մուքելանց Առստամը…

Պապս ել վոչինչ չհարցըեց։ Իբիշը հեռացավ, լավ  
չեր վոր Առստամն և ասել։ Հին հաշիվ ուներ նա  
պապիս հետ։

— Ի՞նչ եր ասում են բայդուշը, — հարցըց տառա։

— Առստամը կանչել ա, թագա քյոխվան։

— Հը։ — պապս նորից կրկնեց։

— Պատասխան յեկած չլինի, — ասաց տառա։

— Կարող ա, վախտն ա, յեկած ել չլինի, հրես վոր-  
տեղ վոր ա կհասնի։ Համա ասեց պրիստավն և կան-  
չում… հը — դարձավ նա մեզ։ Մենք հաստատեցինք,  
վոր Իբիշն այդպես եր ասել, և վորպեսզի ավելի ստույդ  
իմանանք, պապս մեզ ուղարկեց Իբիշի մոտ մի անգամ  
ել հարցնելու։ Իբիշը նախ թոնթորաց, թե չենք թող-  
նում, վոր հանգիստ հաց ուտի, ապա՝ բեղերը սղալե-

լով մեզ հայտնեց, վոր պապիս կանչողը պրիստավն է, բայց ինքը հրամանը ստացել է Մուգելանց Առաստամից:

— Հենց քու ասածն ա լինելու, Նազու աղջիկ, — ասաց պապս, մեզ լսելուց հետո — Յերեկի պատասխանը յեկել ա, կամ ովկիսի թագավորի կողմից մի հարցմունք ունի:

Քննելուց առաջ պապս պատվիրեց ինձ առավոտյան ավելի կանուխ վեր կենալ: Յես նրան պիտի ուղեկցելի, ձին պիտի պահեյի, մինչև պապս ներկայանար պրիստավինու Ուրախությունս անշափ եր: Յես պիտի տեսնեյի հարեան գյուղը, ոլապիս թարքին նստած յես պիտի բարձրանայի սարի գաղաթը, վոր մեր բակից անշափ հեռու յեր յերեսում: Վերջապես յես պիտի տեսնեյի պրիստավին: Այս մտքին անցնելիս, ուրախությունը տեղի յեր տալիս կասկածի, յերելյուղի:

Լուսաբացին տատիս մի անգամ ձայն տալուց իսկույն վեր թռու և արագ-արագ հագնվեցի: Պապս բակում ձիու սանձն եր հագնում: Քիչ հետո յերկուսով ել նստեցինք ձին ու ճանապարհ ընկանք:

Գյուղից յերբ մի քիչ հեռացանք, ինձ համար ամեն ինչ նոր եր և անծանոթ: Հարցելիս վերջ չկար: Ու գեռ մեկի պատասխանը չստացած, մյուսն եյի տալիս, իսկ պապս դողդոջ ձայնով պատասխանում եր, յերբեմն կանչում ձիուն, սանձը ձգում, հենց վոր ձիու վոտքը քարին եր դիպչում:

— Հըեն Ե, Են սպիտակ տունք, կտուրն ել կարմիր, — ցույց տվավ պապս սարի գագաթից դեպի հովիտը, — պրիստավը ենտեղ ա նատում:

— Պապի, վոր թագավորը գրած լինի թե իրավունք եմ տալիս, քեռիս քանի որում կզա:

— Մի աչքը ճպելում: Թագավորի համար ի՞նչ: Ուզենա մի որում հազար վոչխար մորթել տա, կանի:

— Հազար վոչխար...

Քիչ հետո մենք սպիտակ շենքի մոտ եյինք: Ի՞նչքան նորություն կար ինձ համար: Փողոցները ավելի լայն եյին, աներն ավելի սիրուն: Փողոցում շատ ժողովուրդ կար: Խանութների առաջ մարդիկ խռնըվել եյին իրար՝ յուղ եյին ծախում, կով, բուրդ, մեկն իր ապրանքն եր գովում, մյուսը բարձրաձայն սակարկում եր գնորդի հետ: Մի քանի հոգի բարեեցին պապիս: Այդ ինձ ուրախություն պատճառեց:

— Տես ինչ պապի ունեմ, վոր ևս հեռու տեղումն ել են նրան ճանաչում:

Սպիտակ տան առաջ իջանք, ձին քաշեցինք բակի ստվերը: Սանդուղքի վրա նստուել եյին գյուղացիք՝ հայ, թուրք, վոմանք զբուցում եյին իրար հետ, վոմանք պատի ստվերում պառկել եյին, զլխատակին: աղլուխի մեջ փաթաթած պաշարը: Պապս մոտեցավ, խառնվեց նրանց: Մի ըովե յես նրան իմ աչքից կորցրեցի, սիրտս ահ ընկապ, և յերբ տեսա նրա սկ փախը, կանչեցի:

— Պապի:

Ժպիտն յերեսին մոտեցավ, պատվիրեց, վոր ձիռն  
լավ նայեմ, չթողնեմ, վոր մյուս ձիերին մոտենա:

— Թեզ քացի կտան, աչքդ վրան պահիր: Թե վոր  
պատասխան յեկած լինի, քեզ համար խուրմա յեմ  
առնելու:

Նրա խոսքը կիաստ մնաց. մեկը սանդուղքի գլխից  
կանչեց.

— Խուրշուգով Արություն:

Տեսա, թե ինչպես պապս արագ քայլերով հասավ  
սանդուղքին. աստիճանների վրա նստած զյուղացիք  
տեղ տվին վոր անցնի, հետո պապիս սև փափախը  
ծածկվեց գոների յետեւ:

Զիու սանձից պինդ բոնած, աչքս չեյի հեռացնում  
փակ դոներից: Յերբեմն դոները բացվում եյին, ներս  
ու դուրս եյին անում փայլուն կոճակավոր մարդիկ,  
աստիճաններին նստասած մարդկանցից վոմանք վոտքի  
եյին կանդնում, խոնարհ գլուխ տալիս: Իմ աչքին  
բոլորն ել պրիստավ եյին, ու յես չեյի կարողանում  
ջոկել, վորն եւ ամենից մեծավորը:

— Պրիստավն են ա—հարցրի յես կողքիս նըս-  
տած մի ալեսորից, վորի գլխին փաթաթած կեզոստ  
շորի վրա ու այտոսկրին արյան չորացած կաթիլ-  
ներ կային:

— Են ուրյադնիկ Վասոն ա, պրիստավը ոթաղումն  
ա. — ասաց նա: Յես ել չհարցրի, թե ուրյադնիկը  
պրիստավի ի՞նչն եւ Սակայն հետաքրքրությունն ավելի  
սաստկացավ: Յեթե ուրյադնիկին այդքան շատ վոսկի

կոճակ ուներ, ապա ինչեր կլինի պրիստավի հաղին.  
Իսկ թագավորը...

Ինձ թվաց թե սպիտակ տան ներսում մեկը գոռզուում  
ե, վոտքը գետնով տալիս: Սանդուղքի քարին նստուած  
մարդկանցից վոմանք իջան, կանգնեցին բակում:

Հանկարծ դռները բացվեցին, յերևացին մի քանի  
ձեռքեր, իրար խառնված մարմիններ, անթիվ փայլուն  
կոճակներ և այդ ամենի մեջ պապիս սպիտակ գլուխը:

Չեռքերն իջնում եյին նրա գլխի վրա:

Ու մինչև յես բարձր ծկլտացի, ձիու սանձից ըրու-  
նած վաղեցի սանդուղքի կողմը, պապս արդեն թափ-  
եր տալիս փեշերի փոշին: Մեկը վերևից վոտքով շըպը-  
տեց նրա սկ փափախը, ու դռները նորից փակեցին:

Մի քանի հոգի սիրտ արին, մոտեցան: Սակայն վոչ  
վոք ծպտուն չհանեց: Իսկ յերբ բակում յերևաց ուր-  
յագնիկը, նրանք ել հեռացան: Պապս գլխարկը թափա-  
հարեց ու դարձավ ինձ՝

— Ձին պահի, բալաս... Պատասխանը դեռ չկա...

Բերանից արյուն եր գալիս: Յես տեսա նրա ջարդ-  
ված տատամը: Յեվ արյունը, թքի հետ խառնված,  
շրթունքների արանքից կաթում եր արխալուղի վրա:

Ձին մոտ քաշեցի: Մեր գյուղացի մեկը ոգնեց ինձ  
ել, պապիս ել ձին նստելու:

Անխոս ճանապարհ ընկանք...

Պապս գլուխը կախել, ձախ ձեռքով բռնել եր ծնոտը:  
Յես սինդ գրկել եյի նրան, գլուխս հենել մեջքին: Լուռում  
եյի նրա ընդհատ շնչառությունը. պապս լալիս եր:

Գյուղից դուրս դալուց հանկարծ արցունքներս, ամբարտակը պատռած ջրի պես, դուրս թափվեցին Յես ավելի պինդ փաթաթվեցի նրա մեջքին:

Յերեկոյան, յերբ պատճ, ատամների ցավից տնքալով, հազիս լսելի պատմում եր թե ինչ յեղավ ներսում, յերբ ներկայացավ պրիստավին, յերբ Մուքելանց Առաստամը նրա ականջին մի բան փափաց, պրիստավը փրփրեց, հայհոյեց, և վսաքերը գետնին տալով, բունցքները ոգում ճոճելով, ասաց՝

— Յես քեզ ցույց կտամ, թե ինչ և նշանակում թագավորին գանգատ ուղարկել պրիստավից...

Իզուր եր պատճ փորձել թարգմանի միջոցով հայտնելու՝ թե ինքը ուսւաց թագավորին նամակ և գրել միայն իր փորդու՝ Յեզոր Խուրշուգովի մասին:

— Բերանս բաց արի թե չե, մի անգամ խփեց. աչքերս սեացան, գլուխ շուռ յեկավ: Ել միտս չի՝ թե ինչպես դուրս քցեցին... Առըստամը ծիծաղում եր բեղի տակ...

Այն որից շատ տարիներ են անցել: Պանո վաղուց ե մեռել: Գերեզմանի հողը նստել ե, քարը թեք և ընկել, գրերը մամոստել են:

Նրանից մի տարի հետո մեռավ և տատա:

Յեզ մինչեւ վերջին բոպեն միամիտ ծերունին հավատում եր, վոր մի որ պատասխանը գալու յեւ:

Յերբ հիշում եր այն որը, դեմքն այլայլվում եր, հույսն աղոտանում: Սակայն այդ տեսում եր միայն մի վայրկյան: Հետո նորից եր հույս տալիս իրեն ել, մեզ ել.

— Նազու աղջիկ, յես մեռնում եմ: Հուը հավիտ-  
յան պարտական մնաս, յեթե պատասխանն ստանալիս  
չդաս, իմաց չտաս... — ասել եր նա մեռնելիս:

Նազու աղջիկն ել գատարկ ձեռքով եր պառկել  
նրա կողքին: Ու նրա մոտ թաղել եյին և թղթի այն  
կտորը, վորը՝ վորպես թանգագին ավանդ՝ պառավը  
պահում եր սնդուկի մեջ:

Յեվ յերբեք ել չխմացվեց, թե ինչ յեղալ Յեղոր  
Խուրշուդովը... Մնաց վորպես անդուծելի տոեղծված:

Շատ տարիներ են անցել: Այդ անցյալը դարձել է  
հիշողություն, տարիները խունացրել են յերբեմնի  
պայծառ գույները: Ու մեկ-մեկ աչքիս տոաջ և  
դալիս ծերունի պապս՝ աչքերը կապույտ, բարի, միա-  
միտ ժպիտով: Հանկարծ ավերվում ե պատկերը,  
ժպիտը դառնում ե ցալ... և ջարդված ասամներից  
ծորում ե թքախառն արյունը...

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Սովիտակ ձին . . . . .	3
Զմրան մի զիւեր . . . . .	25
Վաղը մարտի 8-ն ե . . . . .	40
Նամակ ռուսաց բագավորին . . . . .	52


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027062

22640  
40 40т.

22640



---

Аксель Бакунц  
Белая лошадь

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.  
Москва, центр, Никольская, 10.